ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ



ԻՄ ՀԱՅԱՍՏԱՆ

Քայլում թե վազում՝ ես երազում եմ,
Մտքով քեզ հետ եմ, ախ, ի՛մ Հայաստան,
Բառեր չեմ գտնում ու կակազում եմ,
Հոգիս գերի է՝ ընկել եմ ոստայն:
Նույնիսկ քո ներսում քեզ կարոտում եմ,
Անտարբերները կասեն՝ ստում եմ,
Սիրո առաջին համբույրի նման
Սիրտս դողում է, դու իմ անանմա՛ն:

Քո ջերմ գրկից ես երբ դուրս եմ գալիս,
Անվերջ կարոտից միշտ սիրտս է լալիս,
Նույնիսկ հեռավոր օտարության մեջ
Քո շունչն եմ զգում բոցեղեն, անշեջ:
Հիմա եկել եմ, ինձ ներե՛ք, ժայռե՛ր,
Գեղուհու նման սևաչյա, վսեմ,
Սրբազա՛ն իմ հող, ի՛մ դաշտավայրեր,
Հոգուս ձայնը ես անշուշտ կլսեմ:

Օ՛, ինչ հրաշք է, ի՞նչ երջանկություն՝
Թռչում եմ ես ետ դեպ իմ մանկություն,
Ուր գրկախառնած Հայաստան, Արցախ,
Խաղաղությունն էր բուրում աջ ու ձախ,
Ուր քամին մեղմիկ ընկած սարեսար
Գութ էր բաժանում մարդկանց
հավասար,
Աշուն թե գարուն, ամառ թե ձմեռ
Երգը ճախրում էր ամպերից էլ վեր:

Գետն էլ շոյում էր կակաչները ալ,
Բայց չէր կեղտոտվում, մնում էր զուլալ,
Եվ իմ տատիկի հեքիաթի վերջում
Խնձոր չէր ընկնում, հուշերն էին շրջում.
«Ճիշտ է՝ տխուր է, որ էլ չունենք Վան,
Ոչ Մուշ, Ալաշկերտ, ոչ էլ Արդահան,
Բայց տեսե՛ք ունենք չքնաղ մի Սևան
Ու սարեր, լեռներ որպես մեզ վահան»:

Պապս տնքում էր ու խոր հառաչում,
Կարծես Հիսուսին հենց նոր էին խաչում.
«Աստվա՛ծ, հրաշքով ինձ նորից տար Վան
Մի բուռ հող վերցնեմ, ետ գամ Երևան, -
Ժպտում էր նա գոհ ու հայավարի, -
Հողը հայրենի թանկ է ձեր մորից,
Բալե՛ք, չթողե՛ք լույսը խավարի՝
Մեր պատմությունը կրկնվի նորից»:

Այժմ կանգնած եմ անցյալ հողմերի
Եվ գորշ ներկայի հենց ճամփեզերքին,
Անձրև՛, մաքրի՛ր ինձ, թող տերն ինձ ների՝
Խոսքս ուղղում եմ ողջ տիեզերքին.
«Մեր խաղաղությունն ունի ԿԱՐՄԻՐ գույն,
ԿԱՊՈՒՅՏ թռչունը մեր երազանքի
Թո՛ղ երգը երգի մեր ԾԻՐԱՆԱԳՈՒՅՆ,
Սպիտակ աղավնին թող արձագանքի:

Թո՛ղ որ վերանան որոգայթները
Հայրենի երկրից՝ ախ, մի բուռ դառած,

Արևի տաքուկ ճառագայթները

Սիրով գուրգուրեն սրտերը սառած,

Եվ հայոց ոգին շուտով արթնանա,

Վերածնվի ու նորից մանկանա,

Որ խաղաղ լինի ամեն մի վայրկյան

Հայաստան երկրիս պայծառ ապագան»:

ՎԻՐԱՎՈՐ ՁԻՆՎՈՐԸ

Թեժ, ճաճանչափայլ արեգակն անհագ
Վերջին համբույրն է բաշխում զինվորին,
Առվակն էլ զուլալ, լուռ, միանվագ
Երգեր է ձոնում այդ վիրավորին:

Դողում է օդը, մարտեր են էլի,
Շուրջն արյուն ու մահ, ցավ անասելի,
Մշուշոտ հեռվում պայթում են ռումբեր՝
Խառնելով իրար մարդկային խմբեր:

Երկաթից ձուլված ինչ-որ թռչուններ՝
Նորագյուտ սարքեր, անօդաչուներ
Դարավոր հողը ռումբերով խոցում
Ու թաղում են այն ծխում ու բոցում:
Բացում աչքերը վիրավոր տղան,
Վերջին բառերն է հիշում մայրական.

«Խաղաղությունը ծնվում է, տղա՛ս,

Պատերազմներից՝ սին ու պատուհաս:

Հանուն հայրենյաց հողի պի՛տ ապրես,

Որ կռվես, բայց տես՝ չգերեվարվես»:

Փնտրում է տղան՝ գրպանի միջին

Իր իսկ տեղում է փամփուշտն իր վերջին:

Ու ժպտում է նա.«Սիրում եմ, մա՛մ ջան,

Քո աչքերը հեզ, գործդ ժրաջան,

Ձեռքերդ քնքույշ ու հոգիդ վսեմ,

Եկել է պահը, որ խոսքդ լսեմ:

Թե գույժը ստանաս՝ որդիդ էլ չկա,

Մի հավատա դու բանսարկուներին,

Ես քեզ կժպտամ շողից արևկա,

Երբ նայես հեռու հորիզոններին:

Կշոյեմ դեմքդ, մազերդ ծածան
Ձեփյուռի հետ մեղմ ու գորովագին,
Իսկ թե երկնքում տեսնես ծիածան,
Դա իմ ժպիտն է ամբողջ աշխարհին:

Ես կա՛մ, կլինե՛մ ամեն ժամանակ՝
Սա է ապրելու իմաստը խորին»:
Թեժ, ճաճանչափայլ արեգակն անհագ
Վերջին համբույրն է բաշխում զինվորին:

ՎԵՐՋԱԿԵՏԵՐ

Ստորակետերի մարտերում ահեղ
Վերջակետերը չեն պարտվել երբեք,
Ինչքան էլ «բայց»-ով, «իսկ»-ով խելահեղ
Կամ էլ «սակայն»-ով գինովնաք, արբեք,
Ես ձե՛զ եմ ասում, ա՛յ վայրի ցեղեր,
Մեր պատմությունը չեք կարող շեղել:

Կխոսենք մենք կարճ ու հասկանալի,
Առանց մտքերի ստորադաս, երկար,
Բառերով շատ պարզ ու հասկանալի
Ու կապացուցենք մարդկանց ապիկար,
Որ շատ արդար է պայքարը հայի՝
Ոչ ոք սուտ հույսեր թող չփայփայի:

Բարին թե չարից ավել չլիներ,
Դժվար թե կյանքը մինչ օրս լիներ,
Եվ լավ իմացեք, չարքե՛ր անաստված,
Բարբարոսնե՛ր դուք գեհենից ծնված,

Ինչքան էլ կեղծեք՝ միշտ իրականում

Վերջակետերը մեզ են պատկանում:

ՎՐԵԺ

Հայոց ոգին միշտ անպարտ,
Լեռան պես վեհ ու հպարտ,
Ձուլված իր սեգ ժայռերին,
Իր մայր հողին, սարերին,
Կռիվ տալով մարտում թեժ,
Մռնչում է լոկ.«Վրե՛ժ»:
Վրեժ՝ անմեղ արյունի,
Որդեկորույս մայրերի,
Քաջ զինվորի աճյունի,
Վրեժ՝ զոհված այրերի,
Ցեղասպանված քույրերի,
Ընդդեմ հոգով կույրերի:
Այն կույրերի, որ դիտմամբ
Պատմությունն են աղարտում՝
Ողջ հայ ազգի նկատմամբ
Ատելություն սերմանում
Ու հրահրում միասին
Պատերազմները միշտ սին:

Մահվան երկյուղը հաղթած,

Հայոց հողին նվիրված,

Սրտում ցասում ու վրեժ՝

Հայ քաջերը պանծալի

Մարտնչում են կռվում թեժ

Դեպ հաղթանակ բաղձալի:

ՉԱՐ ԵՐԱՉ

Դուռս թակեցին՝ մի մարդ էր արի,
Խեղճ հագուստներով, հայացքով բարի,
Նույնիսկ գլխարկին գրված էր «ԱՐԻ».
«Թույլ տվեք ապրեմ ձեզ մոտ մեկ տարի,
Ձեր կարիքները այնպես կհոգամ,
Կապրեք ձեր տան մեջ ինչպես մեծ իշխան»:

Դե, փորձեց խեղճը խոստումներն անել,
Բայց ես հասկացա՝ վիճակս էր անել՝
Չէր կարող անգամ մեխ խփել պատին,
Մուրճը շպրտեց ու կպավ տատին,
Բոլոր իրերը շատ պատահական
Ձարդվեցին, կորան, այլևս չկան:

Հանեցի տանից, նորից եկավ ետ,
Այս անգամ արդեն գամփռների հետ:
Իմ տան մեջ կարծես ես դարձա գերի,

Թե որ հանդուրժեի՝ Աստված չէր ների,
Պետք էր շուտ զանգել ոստիկանություն,
Այդ ինչ փորձանք էր՝ խուլիգանություն:

Դեռ չէի հասցրել ոտքի կանգնել ես,
Ցատկեցին վրաս շներն աներես:
Վախից արթնացա՝ երազ էր սա չար:
Սթափվի՛ր ժողովո՛ւրդ իմ բազմաչարչար,
Գուշակ չեմ բնավ, բայց խոսքիս անսա՝
Վերից ուղարկված զգուշացում էր սա:

Տունն իմ և ամենն, ինչ եղավ տանը,
Դա իմ երկիրն էր՝ իմ Հայաստանը,
Իսկ շներն էլ այդ՝ նենգոտ թշնամին,
Թաթերը դրած հայոց սահմանին:
Ժողովո՛ւրդ, զարթնի՛ր քնից լեթարգյան,
Պիտի պաշտպանենք մեր հողը հայկյան:

ԻՄ ՄԱՍԻՆ

Իմ մասին ինչպե՞ս գրեմ ես, մարդի՛կ,
Չէ՞ որ ոչինչ եմ՝ լոկ երազող սին,
Պարզապես կուզեմ լինել մի մարտիկ՝
Չար ուժերի դեմ կռվենք միասին:
Քեզ հետ, բարեկա՛մ, աշխարհում համայն
Հաղթենք մենք ոչ թե մարտերում միայն,
Այլ նաև մեր պարզ հայի գրիչով
Եվ ինֆորմացիոն համակարգիչով:

ՊԱՏՄՎԱԾՔ

ՍՐՏԻ ԱՉՔԸ

Կանգառը լեփ-լեցուն էր տարբեր տարիքի մարդկանցով: Աշնանային արևը մի կողմից ջերմացնում էր մարդկանց հոգիները, իսկ մյուս կողմից՝ սառը, ձմեռնամուտին սպասող աճպարար քամին, սրթսրթացնելով նրանց ոսկորները, օդում վարպետորեն իրար էր խառնում աղջամուղջի գույներով ոսկեզօծված տերևները և զուր ջանքեր էր թափում զվարճացնելու սպասումից կրկված այդ ամբոխին: Քաղաք տանող վերջին ավտոբուսի երևալուն պես իրարանցում սկսվեց: Մարդիկ իրար խանգարելով փորձում էին առաջինը հայտնվել բացվող դռների դիմաց:

- Ներեցե՛ք, մի կողմ կանգնեք, որ այս անվասայլակով տիկնոջը կարողանանք օգնել,- լսվեց թիկունքիցս ինչ-որ մեկի բարկացած ձայնը:

Ես մոտեցա վերջին դռանը, որտեղ կարծես էլ տեղ չկար ներս մտնելու: Տարիքով համեմատաբար երիտասարդները կառչելով դռների վրա ամրացված բռնակներից, հազիվ կանգնելու մի փոքրիկ տեղ գտած՝ ամբողջ մարմնով կախված էին բաց դռներից դուրս:

- Ժողովո՛ւրդ, մի ոտքի տեղ տվեք, կարողանամ ներս մտնել,- խնդրեցի ես:

Մի երիտասարդ կին, որին արդեն հաջողվել էր երկու ոտքով ամուր կանգնել վերջին աստիճանին, բարեկամաբար իր մի ոտքն օդում կախելով տեղ ազատեց ինձ համար.

- Խնդրեմ, բարձրացե՛ք, թե պետք ունենաք, կարող եք նույնիսկ հենվել իմ թևին:

Աջ ոտքս մի կերպ տեղավորելուց հետո, ինչ-որ մի տեղից արագ բռնվելու նպատակով ձեռքս հանեցի գրպանիցս, և պատահաբար դուրս թռավ ու գետնին գլորվեց իմ թալիսմանը՝ կապույտ ուլունքը, որն արդեն երեսուն տարիներ ինձ ուղեկցում էր ամենուր: Դա մի սովորական աչքի ուլունք էր, որն իր բարությամբ պաշտպանում էր ինձ չար աչքերից: Ես այն «Սրտի աչք» էի անվանել: Շունչս պահած հետևում էի, թե ինչպես էր անցնելով մարդկանց ոտքերի մոտով հայտնվում և նորից անհետանում տեսադաշտիցս: Մի պահ կարծես ինչ-որ մեկը սենյակի էլեկտրական անջատիչի պես չրխկացնելով անջատեց իմ կյանքի լույսը: Աչքերիս դիմաց ամեն ինչ սևացավ, և քիչ էր մնում, թե հետևելով ուլունքի օրինակին ես էլ փռվեի մարդկանց ոտքերի մոտ: «Հոգ չէ, հիմա կգտնեմ և կվերցնեմ այն»,- հույս էի տալիս ինքս ինձ և հայացքով հետևելով

մտքումս ենթադրաբար գծած աներևույթ հետագծին՝ պատկերացնում էի, թե ուր կգլորվեի, եթե այդ ուլունքը ես լինեի և …

Օ՜ զարմանք, ահա՛, մոտակա խոտերից մեկի հետևում թաքնված ծիկրակում էր ինձ և, որ ամենակարևորն էր, լրիվ անվնաս ու ճիշտ նույն տեսքով, ինչպիսին որ կինոթատրոնում իմ տասնվեցամյա նուրբ մատներով, բայց կարծես իննսուն տարեկանի դողդոջուն ձեռքով վերցրել էի այն որպես նվեր: Այդ օրն այնպիսի երկնային երանությամբ էի հիշում: Ես քնել էի մի տեսակ երջանիկ հանգստության ու հոգեկան անդորրի մեջ, բռունցքիս մեջ սեղմած այդ փոքրիկ ապակե կապույտ սրտիկը վրան աչք նկարած, ասես, ոչ մի ակնթարթ չէի ուզեցել բաժանվել, չգիտեմ ուլունքի՞ց, թե այն նվիրող էակից, իսկ երբ առավոտյան բացել էի աչքերս կարծես հայտնվել էի ուրիշ աշխարհում, որտեղ ամեն ինչ ուրիշ էր: Թեև բոլոր իրերն իրենց տեղում էին, բայց պարուրված էին ինչ-որ երկնագույն, անիրական շղարշով: Թվում էր, թե դա հենց իմ սիրտն էր, որ երջանկությունից դուրս էր թռել, մեծացել ու իր կապույտ թափանցիկությամբ մի տեսակ լցրել ամբողջ սենյակը: Պատուհանից դուրս նայելով շատ էի զարմացել, տեսնելով, որ այն տարածվել էր նաև ամենուր և խառնվելով այդ սրտաձև ուլունքն ինձ նվիրող

գանգրահեր պատանու էությանը, նվաճել էր ողջ տիեզերքը՝ իմ տիեզերքը: Ինչքան էլ անծայրածիր ու մեծ էր շուրջս գոյացած այդ կապույտ երանությունը, վստահ էի, որ այն նման էր իմ բռի մեջ պահած «Սրտի աչք» ուլունքին: Ես կարծես այլևս չկայի, վերացել էի աշխարհից, գոյություն ուներ միայն նա՝ այդ պատանին: Դա իմ նոր «ես»ն էր: «Մի՞թե սիրահարվել եմ,- զարմանում էի ես,- ուրեմն, այս կապույտ տարածությունն իմ առաջին սիրո մոլորակն է՝ Սրտի աչք-մոլորակը»:

- Տիկի՛ն, առա՛ջ անցեք, թույլ տվեք՝ մենք էլ տեղավորվենք,- մի ցմփոր և չսափրված դեմքով տղամարդ կամենում էր ինձ առաջ հրելով իմ ոտքի տեղը նվաճել: Հետո կարծես փոշմանեց և վազեց առաջին դռնից մտնողներին հրելու: Ես դռնից կախված՝ փորձում էի տեսադաշտիցս բաց չթողնել իմ փոքրիկ կապույտ ուլունքը, որն անցորդների ոտքերին դիպչելով նորից սկսել էր գլորվել աջ ու ձախ:

Ուլունքն ինձ նվիրող պատանին և ես, պատահաբար էինք հանդիպել այս կյանքում, և մեզ թվացել էր, թե վաղուց, շատ վաղուց էինք ճանաչել իրար, կարծես մեր ողջ մանկությունը միասին անցկացնելով երկիր էինք ժամանել ինչ-որ հեռավոր կործանված

մոլորակից, որի միակ ողջ մնացած էակներն էինք:

- Խնդրում եմ, ոտքիս կանգնելու տեղը պահեք, հիմա գալիս եմ,- մի փոքր շփոթված դիմեցի ինձ տեղ տվող երիտասարդ կնոջն ու ցատկեցի ներքև՝ ուլունքիս հետևից:

«Վա՛յ, այն հաղթանդամ մարդը փղի պես ճոճվելով քայլում է չարաճճի անմեղությամբ ինձ ժպտացող ուլունքիս ուղղությամբ, հանկարծ չտրորի այն»,- անհանգստացա ես: Վե՛րջ... Աչքերիս առաջ նրա ծանր ոտքի տակ փշրվելով իմ «Սրտի աչքի» բազմաթիվ մասերը ցատկոտելով ցիր ու ցան եղան տարբեր ուղղություններով: Այդ «փղամարդ» տղամարդը չգիտակցելով անգամ իր զարհուրելի արարքը մի անտարբեր ներողություն շպրտելով վրաս ճոճվեց ավտոբուսի ուղղությամբ:

«Ախ, իմ կապտաչյա՛ պաշտպան, դու այնպես խոսուն էիր, բայց և այնպես լուռ,- մտքումս հառաչելով կարծես իմ վերջին հրաժեշտն էի տալիս ուլունքիս,- դու արթուն ժամանակ քնած էիր, իսկ քնած ժամանակ նաև արթուն: Այնքան բարի էիր ու ներողամիտ: Դեպքեր էին պատահել, երբ բռնադատված արդարությունս հալածող ինչ-որ աղծապիղծ էակներ իրենց խոսքի երկաթե պարաններով սիրտս քամել էին մինչև ուժասպառ լինելս,

բայց դո՛ւ, իմ փոքրի՛կ Սրտի աչք, նրանց ժպտացել էիր շատ անկեղծ, և այդ ժպիտի մեջ ներված էին բոլորը»:

- Խնդրում եմ, մի՛ տրորեք այս փշուրները, այն կողմից անցեք,- հուսահատ դիմում էի դեպի ավտոբուս վազող մարդկանց:

- Ա՛յ բալա ջան, ջանդ սաղ լինի, ինչի՞ հետևից ես ընկել,- փնթփնթաց ձեռնափայտի վրա հենված մի տարեց կին ու խուսափելով փշուրների վրա ոտքը դնելուց, ծիծաղաշարժ ու անսովոր շարժումներ անելով՝ հազիվ իրեն պահեց, որ վայր չընկնի: Կնոջ ձեռնափայտի օդում թափահարումներն ու կոնքի անբնական տատանումներն այնքան զվարճալի թվացին կանգառում կանգնած երեխաներին, որ նրանք բարձրաձայն հռհռացին:

- Շատ էլ լա՛վ է եղել, որ ջարդվել է,- արդեն բարկացած շարունակեց նա,- չարը խափանվել է, թե չէ պիտի վայր ընկնեի, մեռնեի:

Նա տնքտնքալով իր ձեռնափայտի ծայրով մի քանի փշուրներ չարությամբ աջ ու ձախ շպրտեց և անցավ առաջ:

«Խե՛ղճ փշրված մասնիկներ,- մտածում էի,- նրանք բոլորն էլ ջանում էին արտացոլել այն, ինչ մինչև փշրվելն էին, մի՞թե դա անում էին

ինձ հույս տալու համար»: Ես պարզ տեսնում էի նրանց հոգիներն իրենց բազմաթիվ արտացոլանքների մեջ՝ մեկն անքթիթ հայացքը հառել էր երկնքին, մյուսը հրճվում էր կամ ծիծաղում, մեկ ուրիշն էլ ահազարհուր վիճակից կծկված կիսաբաց կոպերով գաղտնի հետևում էր իրականությանը: Զարմանալի էր, ինչպե՞ս կարող էր մեկ աչքը միաժամանակ տարբեր արտացոլանքներ ունենալ, այն էլ այն դեպքում, երբ ինքն արդեն գոյություն չուներ՝ ամբողջովին փշրված էր: Նրանցից ամեն մեկն ինձ փորձում էր հիշեցնել իմ սիրո պատմության որևէ դրվագ: Պատկերացրեք, դա նրանց հաջողվում էր:

Ես սկսեցի հավաքել իմ ռոմանտիկ սիրո փշուրները: Ամեն մեկը, երբ մատով դիպչում էի իրեն, սիրտս պատռելով բացում էր մի նոր հիշողության դռնակ, որից ներս մտնելու գայթակղությանը չէի կարող դիմադրել, որովհետև ես քաղցրասեր եմ, իսկ մանկության ու պատանեկության հիշողությունները երևի թե բոլորի համար էլ ամենաքաղցրն են:

****

Ավտոբուսի վարորդը ձայնային ազդանշանով զգուշացնում էր մարդկանց, որ արագացնեն անվասայլակով տիկնոջը բարձրացնելու

գործողությունը, իսկ ես, գետնին թափված բազմագույն կիսաչոր տերևների արանքից փայլուն ապակիները հավաքելով, քթիս տակ մրթմրթում էի. «Ո՞ւր է այն արտացոլանքը, որը կպատմի, թե ես ինչպես նրա հետ հայտնվեցի կինոթատրոնում»: Ահա ուլունքի հենց այն կտորը, որը կարծես մեր ծանոթության առաջին օրվա հիշողությունն էր փորձում պաշտպանել անցորդների ոտքերի տակ կրկնակի փշրվելուց: Ես ակնածանքով ու մի տեսակ ջերմությամբ վերցրեցի այն ու նայեցի ապակուց ներս:

…

Ուրախ ու անհոգ քայլում եմ իմ հարազատ քաղաքի փողոցներով և հիանում բարձրահարկ շենքերով ու նրանց կողքին աճած ցածրիկ յասամանի թփերով: Այդ մանուշակագույն բուրմունքից արդեն արբած մտքում նկարում եմ իմ շուրջը փռված գարնան կանչը, որն ինձ կարծես հավիտենական սեր է խոստանում: Ընկերուհիս՝ Լիաննան, որի հետ վերջերս եմ ծանոթացել, հրավիրել է իրենց տուն՝ մասնակցելու իր ծննդյան տոնակատարությանը: Շուտով կհասնեմ: Նա բնակվում է վաղուց արդեն քանդվելու ենթակա շենքերից մեկի երրորդ հարկում: Երբ ներս եմ մտնում, բազմաճամուկ լույսերով ու ծխի մեջ կորած սենյակն

աչքերիս դիմաց այնպես է ճոճվում պարողների ոտքերի տակ, որ թվում է, թե մինչև երգի ավարտը հատակը չի դիմանա ու փուլ կգա ներքևում ապրողների վրա:

Վառվող մոմը ձեռքին ինձ է մոտենում գանգրահեր, թիկնեղ կազմվածքով և բարձրահասակ մի երիտասարդ, որն իր տեսքով հիշեցնում է ֆրանսիացի դերասան Ալեն Դելոնին Զորրոյի դերում: «Զորրո» ֆրանս-իտալական կինոնկարը վերջերս եմ դիտել կինոթատրոններից մեկում, իսկ այդ անունից արդեն հոգնել եմ՝ ամեն տեղ բակերում կամ պուրակներում գետնի վրա, մուտքերի դռներին կամ վերելակների պատերին կավիճով գրված է «Զորրո»: Ըստ երևույթին այդ կինոնկարը շատ է դուր եկել դպրոցականներին: Այդ Զորրոյին նմանվող անծանոթ տղան մի տեսակ շատ հարազատ է թվում ինձ: Նա վառվող մոմը մոտեցնելով ինձ առաջարկում է.

- Մի բան պահեք մտքում և փչե՛ք ու Ձեր երազանքը կիրականանա:

Ես մտքումս պահում եմ՝ ուզում եմ շուտ դուրս գալ այստեղից, ու փչում: Երևի շատ թույլ եմ փչում, մոմը չի հանգում: Նա ձեռքը դանդաղ շարժումներով մոտեցնում է ու երկու մատով հանգցնում փոքրիկ բոցն առանց դեմքի որևէ մկան շարժելու: Ես հիացած եմ նրա

դիմացկունությամբ և կամքի ուժով ու միաժամանակ փորձում եմ նաև հասկանալ ինքս ինձ, թե ինչու ըստ իմ սովորության, չեմ կոպտում նրան, չէ՞որ երբեք չեմ ծանոթանում ոչ մի երիտասարդի հետ և ինձ միշտ բարկացնում է, որ տղաները չեն կարողանում անտարբեր անցնել իմ կողքով, որովհետև գեղեցիկ եմ:

- Դե հիմա եկեք ծանոթանանք,- ասում է նա ձեռքն ինձ մեկնելով, - Զորրո:

Իմ հիասթափությանը սահման չկա: «Այ քեզ մեծամիտ»,- մտածում եմ,- «իրեն Զորրո է պատկերացնում, հետո ինչ, որ նա կառուցվածքով մի փոքր նման է այդ կինոնկարի հերոսին»: Ձեռքս չեմ մեկնում ու հայտնում եմ, որ պիտի գնամ:

- Ո՞ւր ես շտապում,- անհանգստանում է Լիաննան:

- Պիտի անպայման մինչև տուն գնալս հասնեմ կինոթատրոն երկրորդ անգամ նայելու «Զորրո» կինոնկարը,- ասում եմ՝ չարացած նայելով այդ երիտասարդին,- ուզում եմ իմանալ, թե ի՞նչ եմ բաց թողել կամ չեմ ընկալել, որ բոլորն այդչափ հիացած են այդ ֆիլմով:

- Երեխե՛ք, ո՞վ է ուզում գնանք «Զորրոն» նորից դիտելու,- բարձր ձայնով շեփորում է ընկերուհիս:

Պարզվում է՝ շատերն են ցանկանում միանալ ինձ, այդ թվում նաև այն պարծենկոտը: Դա հերիք չի, կինոնկարը դիտելիս էլ չգիտես ինչու, հայտնվում է իմ կողքին:

- Իմ անունն իրոք Զորո է,- շշնջում է նա իմ ականջին,- միայն թե մեկ «ր»-ով է գրվում ի տարբերություն այս ֆիլմի հերոսի անվան:

- Լո՞ւրջ,- զարմանում եմ ես և նույնիսկ շատ եմ ուրախանում, որ նա բոլորովին էլ մեծամիտ չի:

- Ես հայ չեմ,- շարունակում է նա,- ու այս անունը տարածված է մեզ մոտ, ես եզդի եմ:

Նա դա ասում է մի քիչ ամաչելով ու գլուխը կախելով՝ ասես ինչ-որ հանցանք է գործել:

- Գիտեմ, հիմա, երևի դու այլևս չես ուզենա ինձ հետ ընկերանալ,- շարունակում է նա, - բայց ես այնպիսի զգացում ունեմ, ասես ամբողջ կյանքում քեզ եմ սպասել:

Հանելով գրպանից մի փոքրիկ սրտաձև աչքի ուլունք մեկնում է ինձ ասելով.

- Սա պահիր ինձնից հիշատակ, խնդրում եմ, չկորցնես այն: Սա մենք ենք՝ ես ու դու: Երբ

սրան մի բան պատահի, ուրեմն մենք այլևս չկանք:

Ուլունքը դնելով ափիս մեջ նա փշաքաղվում է, ես ևս: Այդպիսի բան լինում է միայն հազար տարին մեկ՝ մեր հոգիները մեկ ակնթարթում ձուլվում են իրար: Նրանք հազարամյակներ մաքառել են ձգտելով հասնել միմյանց, տանջվել, բայց պայքարել ու այստեղ, այս մոլորակի վրա, այդ պահին ստանում են Աստծո պարգևը՝ առաջին սիրո հավիտենական բերկրանքը, որը քչերին է ընծայված:

Մեր ծանոթության առաջին օրվա կոտրված փշուրը խնամքով փաթաթեցի թաշկինակիս մեջ և արագ-արագ սկսեցի մյուսները հավաքել:

...

Ա՛յ, այն մեկում մենք փետրագնդակ ենք խաղում: Մեզ է միանում իմ ամենասիրելի ընկերուհին՝ Մարինեն, որի հետ մտերմացել եմ դեռևս մանկապարտեզում: Նա հրճվում է ինձ ու Զորոյին միասին ու երջանիկ տեսնելով և չի նեղվում, որ արդեն ավելի քիչ ժամանակ եմ անցկացնում իր հետ:

Սա էլ փշրված մեկ այլ բեկոր էր՝ գունազարդ հիշողության մի այլ փխրուն արտացոլանք:

...

Խավար կինոդահլիճում մենք սիրով վայելում ենք նաև ավագ քրոջս ընկերակցությունը, որն այդպես էլ իր այդ ցանկալի կինոնկարը չէր դիտի, եթե չլինեին Զորոյի ուժեղ բազուկները: Մի քանի տոմսակ էր մնացել, իսկ հերթն արդեն չկար, գոյություն ունեին տոմս ձեռք բերել ցանկացողների մի վիթխարի բազմություն և լողորդի շարժումներով այդ բազմությունը ճեղքող ու դեպի տոմսավաճառը ձգտող բազուկներ:

Ամենօրյա կինոդիտման գնալիս, երբեմն նույնիսկ տատիկիս ենք ընդգրկում մեր փոքրիկ խմբում, որ տանը մենակ չմնա: Զորոն դարձել է մեր ընտանիքում մի հարազատ ու ցանկալի հյուր, որին սիրում են բոլորը: Երեկոյան թիթեռների պես անհոգ թռչկոտում ենք մի կարուսելից մյուսը կամ, նստելով այգու մեր սիրած նստարանին, ապագայի մասին երազներ հյուսում:

****

Նայեցի ետ՝ ավտոբուսը դեռ տեղում էր, պիտի արագացնել ու փրկել ուլունքիս միայն խոշոր, աչքի ընկնող մասերը: Ոտքերիս մոտ մի շատ ծիծաղելի, ջարդված կտոր կարծես մեջքի վրա ընկած ու ծիծաղից գալարվող ինչ-

որ կենդանի լիներ: Նայեցի ապակուց ներս պարզելու, թե ինչու էր ծիծաղում …

…

Կիսամութ սենյակում անդորր է: Ինձ մի թեթև վատ զգալով պառկած եմ մահճակալին ու փորձում եմ լսել լռության ձայները: Մութը, արևից թաքնվելով մեր տան ծանր վարագույրների հետևում, վախից կծկվել է հույս ունենալով, որ ոչ-ոք պատահաբար էլեկտրական անջատիչով չի վառի սենյակի լույսը:

Հանկարծ դռան զանգն է հնչում:

- Վա՛յ, այս ի՞նչ է պատահել, ինչո՞ւ ես հիվանդացել,- դուռը բացվելուն պես տագնապած հայացքով ու շնչակտուր՝ մի քանի մեծ լոքերով մահճակալիս մոտ է հայտնվում Զորոն:

Ես, որ որովայնի ցավերից մի փոքր սփրթնած տեսք ունեմ, ամոթից կարմրատակում եմ: Ինչպե՞ս ասեմ նրան, որ ոչ մի լուրջ բան էլ չկա, որ դա ինձ հետ պատահում է ամիսը մեկ անգամ, ինչպես բոլոր կանանց հետ:

- Մի տեսակ թույլ եմ ինձ զգում, բայց հոգ չէ, հիմա վեր կկենամ,- պատասխանում եմ փորձելով ժպտալ:

- Վա՛յ, չէ, չէ, մի՛ վեր կաց, - իրեն կորցրածի պես ասում է նա, - հիմա շտապօգնություն կզանգեմ:

- Ի՞նչ ես ասում, չէ՛, հանկարծ չզանգե՛ս,- վախեցած ու օգնություն հայցող հայացքով փնտրում եմ փոքր քրոջս, որը դուռը բացելուց հետո անհայտացել է իմ տեսադաշտից, բայց շատ ուշ է արդեն, ականջիս մեջ հնչում են մեր տան հասցեն ու նաև շտապօգնությանը հետաքրքրող որոշ մանրամասներ: Մի քանի րոպեից Զորոն դուրս է գալիս դիմավորելու բժշկական անձնակազմին:

«Ի՞նչ անել, ա՛յ քեզ խայտառակություն,- մտածում եմ,- գուցե ստե՞մ, որ կույրաղիքս է ցավում: Չէ՛, բա որ այնքան բնական խաղամ, որ իրոք տանեն ու վիրահատեն, ինչպես որ ձևացրեցի թե տաքություն ունեմ դասի չգնալու միտումով ու տնեցիների հորդորով ջերմաչափ դրեցի թևիս տակ: Ի զարմանս ինձ, ջերմաչափն ինձ հավատարիմ գտնվելով՝ բարձր տաքություն ցույց տվեց: Իրականում ես մի քանի օրով հիվանդացա: Չնայած, ո՞ւմ է պետք այդ կույրաղիքը, թող հանեն»:

Մինչ խորհում եմ ինչ անել, բակից արդեն լսվում են շտապօգնության անձնակազմի ձայները.

- Իսկ հիվանդը քանի՞ տարեկան է:

- Քանի՞ օր է արդեն այդ վիճակում:

Մի քանի րոպե ևս ու ես կլսեմ նրանց արդեն տուն մտնող ոտնաձայները, ա՛յ քեզ բան, ի՞նչ անել: Երբ գլխում որևէ միտք չի առկայծում, իսկ ժամանակ ուղղակի չկա, ոտքերն են որոշում կայացնում: Նրանք՝ իմ ոտաբոբիկ ոտքերը, բնակարանի դռնից արագ դուրս են վազում, բայց չեն հասցնում բակ դուրս գալ: Դիմացից՝ արդեն մուտքի առաջին հարկի մի քանի աստիճաններով, բարձրանում են սպիտակ խալաթավորները: Ես մի ակնթարթում հայտնվում եմ մեր մուտքի երկրորդ հարկում: Փորձելով պահել շնչառությունս՝ վախից փակում եմ աչքերս: Լսել եմ, որ մի ժամանակ այդպես սուտմեռուկ էին դնում, երբ արջի էին հանդիպում և ուրիշ ելք չէին ունենում, բայց նրանք պառկած էին, իսկ ես՝ կանգնած եմ ու թվում է, թե ուրոր է վախից կամ խայտառակությունից ուշագնաց կընկնեմ:

- Խնդրե՛մ, մտե՛ք ներս, այստեղ է,- լսվում է Զորոյի կտրուկ ձայնը:

Լավ է, որ կարողացել եմ աննկատ մնալ: Հիմա մեկ ուրիշ խայտառակություն է ինձ սպասվում: Վերևում ապրող ցանկացած հարևան տնից դուրս գալիս ու վերադառնալիս անցնելու է հենց այնտեղով, որտեղ կանգնած եմ ես՝ բոբիկ, հնաոճ

գիշերազգեստով ու խառնված մազերով: Հերիք չի, որ հետագայում տարիներով կբամբասեն ու կծիծաղեն, այս պահին էլ բարձրաձայնելով իրենց զարմացական հարցերը՝ կմատնեն իմ տեղը:

Հանկարծ ինչ-որ դռան բացվելու ձայն է լսվում: Ես քարանում եմ: «Տեսնես ո՞ր հարևանն է»,- մտածում եմ: Դռնից դուրս եկողի տարակուսած ձայնը, որն ինչ-որ մեկի հետ հեռախոսով է խոսում, սթափեցնում է ինձ.

- Հիվանդը փախե՛լ է:

- Ինչպե՞ս թե փախել է,- բարձրախոսի միջից պատասխան տվողի զարմացական ձայնն այնքան զվարճալի է թվում ինձ, որ քիչ է մնում, թե փռթկալով մատնեմ իմ տեղը: Փաստորեն, այդ բացվող դուռը մեր բնակարանինն է: Մնում է, որպեսզի չհասկանան, որ միակ տեղը, ուր կարող եմ գնալ, դա մեր մուտքի վերնահարկն է:

Մուտքի փոքրիկ պատուհանից դիտում եմ բակի եռուզեռը: Զորոն ինձ ձայն տալով ձախ է վազում, բժիշկները՝ աջ, ձեռքերը թափահարելով ցույց են տալիս, որ դեռ նորություն չկա ու հետո վազում հակառակ ուղղությամբ: Քույրս զարմացած հայացքով նրանց է նայում: Նա, խորասուզված լինելով ընթերցանության մեջ, բակի աղմուկը լսելուն

պես դուրս է եկել պարզելու, թե ինչ է կատարվում և ոչինչ չի հասկանում. այդ շտապօգնությունն ինչո՞ւ է եկել, ո՞ւմ են փնտրում, եթե հանցագործ է փախել ինչ-որ տեղից, ապա ինչո՞ւ ոստիկանությունն այդտեղ չի, այլ շտապօգնությունն է զբաղվում այդ հարցով:

Երբ ձայները դադարում են ու մեր տան դուռը ներսից կլանում է քրոջս ու Զորոյին, ես իջնում և սեղմում եմ զանգի կոճակը:

Այդ օրը մենք երեքով երկար ժամանակ ծիծաղում ենք ու չենք կարողանում հանգստանալ:

****

Վարորդը, տեսնելով անվասայլակով կնոջը բարձրացնելու հետ կապված լուրջ դժվարությունները, իջել էր ավտոբուսից և ծխախոտի իր ծուխը խառնելով քամուց առաջացած փոշեհատիկներին, փորձում էր առատորեն լցնել շրջապատի մարդկանց թոքերը: Նա օգնելու փոխարեն կատակում, երբեմն էլ հեգնում էր անվասայլակը բարձրացնողներին: Լավ էր, ժամանակ դեռ ունեի, կհասցնեի բոլոր կարևոր փշուրները վերցնել գետնից, մանավանդ, որ վայրագ քամին, մտքիցս ջնջելով աննշան թվացող

օրերը, ինձնից հեռու էր քշում ու հողով ծածկում թեթև փշուրները: Թախծոտ երանությամբ նայում էի ձեռքիս մեջ շողշողուն, նուրբ ու թափանցիկ ապակուն:

...

Ապակու միջից ինձ են նայում իմ ու Զորոյի ուրախ աչքերը: Ի՜նչ երջանիկ եմ ես, Զորոն նույնպես: Նա հաճախ է կրկնում.

- Լսի՛ր, երբեմն ինձ թվում է, թե նույնիսկ աստվածներն են նախանձում մեզ:

- Չէ՛, Զո՛ր ջան, աստվածները նախանձ չեն, դու վախեցիր մարդկային նախանձից,- մի օր ասում եմ նրան,- չնայած, ի՞նչ եմ ասում, մենք ունենք այս հզոր, սրտաձև աչքի ուլունքը, այնպես որ մենք աշխարհում ամենապաշտպանված էակներն ենք,- ու խանդավառությամբ գրպանիցս հանում եմ այն՝ մեկ անգամ ևս հիանալու այդ փոքրիկ, կապույտ թափանցիկությամբ:

- Միևնույնն է,- ասում է նա,- այնքան եմ վախենում քեզ կորցնել, որ չնայած իմ կողքին ես, դարձյալ կարոտում եմ քեզ:

Բարձրաձայն ծիծաղում եմ, որովհետև ես էլ եմ նույնը զգում, բայց ոչինչ չեմ ասում՝ մի տեսակ անհարմար եմ զգում բառերով սիրո

զգացողություններս արտահայտել, ինձ թվում է, թե բառերը գողանում են մեզնից մեր իրական սերն ու եթե այդպես շարունակվի, մի օր այն կվերջանա:

- Դե ուրեմն, գնանք եկեղեցի ու խնդրենք, որ Աստված մեզ երբեք չբաժանի ու միշտ վայելենք իրար տեսնելու բերկրանքը,- ասում եմ,- և դրա մասին այլևս երբեք չենք անհանգստանա:

****

Քանի որ ամեն ինչ հրաշք է ու հրաշալի, իսկ կյանքն այդպես չի կառուցված, և ամեն մի լավ երազ կամ էլ կյանքի երջանիկ ժամանակահատված ի վերջո իր ավարտն է ունենում, մեր խաղաղ կյանքը նույնպես վերջանում է ու վերածվում մղձավանջային երազում տեղի ունեցող հալածանքների՝ երբ փորձում ես արթնանալ ու ազատվել դրանից, բայց չես կարողանում:

Մեր հանդիպումներից մեկ տարի անց իմ ընտանիքն իմանում է, որ Զորոն հայ չի: Սկսվում է հայ-քրդական պատերազմը: Այն համարյա նույն ուժգնությամբ Զորոյենց ընտանիքում է ընթանում: Նա չի կարող ամուսնանալ կամ սիրային հանդիպումներ ունենալ որևէ հայուհու հետ՝ համաձայն

եզդիների ազգապահպան և չձուլվելու նպատակով ստեղծված ներքին չգրված օրենքի, ինչպես ինքն է ասում շատ կարճ.

- Եզդիները պետք է ամուսնանան միայն եզդիների հետ:

- Զո՛ր, ինձ էլ խստիվ արգելեցին քեզ հետ հանդիպել, հիմա գաղտնի եմ եկել ու պետք է շտապ գնամ: Նրանք ինձ ասացին՝ քանի որ մեր ժողովրդի պատմության ընթացքում մեզ կոտորել են ոչ միայն թուրքերը, այլ նաև քրդերը, դու չպետք է ամուսնանաս մեզ ինչ-որ ժամանակ թշնամի եղած ազգից որևէ մեկի հետ:

- Բայց եզդիներն ու քրդերը տարբեր ազգեր են, նրանք նույնիսկ տարբեր կրոններ ունեն,- զարմանում է Զորոն,- ասա՛ նրանց, որ ես հայ ժողովրդի եզդի զավակն եմ:

- Փորձել եմ, Զո՛ր ջան, բայց, ցավոք, իմ բոլոր բացատրություններն առ ոչինչ են նրանց համար: Զո՛ր, բա հիմա ի՞նչ ենք անելու:

Սրճարանը, որտեղ նստած ենք, կորել է ծխի մեջ ու այնքան աղմկոտ է, որ հազիվ է լսվում ձայնասկավառակի երգի բառերը. «Մի՛ սպանեք, մի՛ սպանեք ձեր սերը, Դուք երկրորդն էլ չեք ունենա ...»: Սեղանները, որոնք նախատեսված են չորս հոգու համար, շրջապատված են լրացուցիչ աթոռակներով,

և ազատ տեղ գտնելու համար մարդիկ պատուհանների ու պատերի մոտ շարված սպասում են իրենց հերթին: Իր ձայնն ինձ ավելի լսելի դարձնելու համար Զորոն գլուխը մոտեցնում է ականջիս:

- Արի միացնենք մեր ձեռքերը՝ նրանց մեջ պահելով մեր թալիսմանը ու աղոթենք,- առաջարկում է նա:

Այդպես էլ անում ենք: Երբ վեր ենք կենում, որ գնանք, նա ծիծաղելով զգուշացնում է.

- Շալվարիս վրա չզարմանաս:

Ես, իհարկե, չեմ նկատել նրա տարօրինակ հագուստը, որովհետև երբ մտել եմ ներս, նրան սրճարանի աթոռին նստած եմ տեսել: Նայում եմ այդ կողմ: Նրա հագին հին, մաշված, տեղ-տեղ պատռված ու վրան տարբեր գույնի ներկեր թափված տաբատ է, իսկ կոշիկների փոխարեն՝ բաց մոխրագույն հողաթափեր:

- Սա ի՞նչ է, Զոր:

Չկարողանալով զսպել իմ բարձրաձայն հռհռոցը՝ ես իզուր լրացուցիչ հանդիսատես եմ հավաքում տաբատի այդ «վերջին նորաձևությունը» դիտելու համար:

- Շո՛ւտ, շուտ դուրս գնանք այստեղից, բոլորը մեզ են նայում: Հետո կպատմեմ, հանկարծ իմ ծանոթներից մեկն ինձ չտեսնի այս տեսքով:

Դուրս գալու պահին մարդիկ, իրոք, զարմացած մեզ են նայում: Հանկարծ ամբողջ սրճարանում միանգամից ծիծաղը պայթում է ռումբի նման ոչ այնքան նրա կեղտոտ ու ներկոտված հագուստի, որքան կողքից իմ շատ տարօրինակ ու ծիծաղելի շարժումների համար: Առջևից քայլում է բարձրահասակ Զորոն, հետևից էլ ես՝ մի քիչ առաջ թեքված, կիսակռացած մարմնով: Երկու ձեռքերս առաջ պարզած՝ իմ արևային ծղոտե գլխարկը մոտեցրել և հենել եմ նրա տաբատի հետնամասին՝ գոտուց ներքև և փորձում եմ սրճարանի սեղանների միջով անցնելու պահին, նրա իրանի աջ ու ձախ թեքվելիս, չկորցնել գլխարկիս այդ դիրքը: Կողքից այդ ամենը նման է երեխաների մեքենա-մեքենա խաղին, որտեղ որպես ղեկ են ծառայում իմ կլոր գլխարկն ու նրա հետնամասը: Դե, մարդիկ ինչ իմանան, որ ես իմ գլխարկով ծածկում եմ ավելի ծիծաղելի մի տեսարան: Տաբատի հետնամասի պատռվածքն ավելի է բացվել ու եթե գլխարկովս չփակեմ այն, նրանց դիմաց կհայտնվի մի երիտասարդ՝ իր երևացող ներքնաշորով: Մենք արագ տաքսի ենք նստում ուղևորվելով Զորոյի

ամենամտերիմ ընկերոջ տուն: Շունչս տեղը բերելով հարցնում եմ.

- Դե, Զո՛ր ջան, պատմիր, այս ծաղրածուի շորն ինչո՞ւ ես հագել: Այսպիսի կատակ չէի սպասում քեզնից:

- Բնավ էլ կատակ չեմ անում, - նեղացած տոնով պատասխանում է նա,- քանի որ չեն թույլատրում այլևս հանդիպել քեզ, ես հրաժարվեցի բոլորի հետ միասին տատիկիս տուն գնալ: Ուզում էի տանը մենակ մնալ ու զանգել քեզ այսօր հանդիպելու հույսով: Մայրիկս իմ միտքը գուշակեց և, որպեսզի դա չպատահեր, բոլոր շալվարներս ու կոշիկներս իր հետ տարավ, մնացի տնային խալաթով ու հողաթափերով, իսկ սա ես գտա նկուղում, վերջերս բանվորներն ինչ-որ գործ էին անում այնտեղ:

Զորոյի ընկերոջ տանը մեզ տաք սուրճ հյուրասիրելուց հետո ստիպում են, որ նա իրենց առաջարկած նոր արդուկած տաբատն ու ամառային կոշիկները վերցնի որպես նվեր, և օրվա մնացած մասն անց ենք կացնում նորից վայելելով մարդկանց ուշադրությունը, բայց արդեն, ինչպես միշտ, գեղեցիկ զույգին գնահատող հայացքների ներքո:

Այնքան երջանիկ ենք իրար հետ, որ խնդրում ենք Աստծուն մեզ երբեք չբաժանի, և եթե վրա հասնի մեր կյանքին հրաժեշտ տալու

ժամանակը, թող դա պատահի նույն օրը, նույն ժամին և նույն տեղում: Այդ տարօրինակ միտքը մեր գլխում կարծես միաժամանակ է ծագում, գուցե մյուս աշխարհում անմիջապես միասին լինելու ձգտումի՞ց, չգիտեմ:

****

Աղոթքը մեծ ուժ է: Այն մեզ երբեմն օգնում է անտեսանելի մնալ երկկողմանի լրտեսական ցանցերից այդ փոքրիկ «ազգասիրական» պատերազմում, որոնց մեջ հաղթող կողմը մերոնք են, որովհետև մարտնչողներն ավելի շատ են: Մեր լրտես բարեկամներն արդեն զգուշացված են՝ որտեղ և երբ էլ տեսնեն մեզ միասին, պարտավոր են անմիջապես զանգել կենտրոն, այսինքն՝ ծնողներիս, որից հետո իմ տնային կալանքին հետևելու է ամեն տեղ միայն նրանցից որևէ մեկի ուղեկցությամբ գնալը:

Սակայն, ի մեծ ուրախություն ինձ, իմ թիմակիցներից ամենահավատարիմը՝ Մարինեն, օգնում է մեզ դուրս գալ այդ անելանելի վիճակից: Նա միամիտ դեմքով հավաստիացնում է մերոնց, որ ես ամբողջ օրն իրենց տանն եմ անցկացրել և, անկասկած, չեմ հանդիպել Զորոյին ու իր

գիշերային աղոթքի մեջ ներում խնդրում Աստծուց իր անմեղ ստի համար:

Թեժ պայքարը շարունակվում է: Մեր հարևաններն ու բարեկամները, քեռիներն ու հորաքույրները, մորաքույրներն ու նրանց ընկերուհիները, որոնց տարիներով չեմ տեսել, համարյա ամեն օր մեր տանն են՝ քննարկելու, թե ինչպես ազատվել Զորոյից:

- Այս փոքրի՛կը, այս փոքրիկը... ահավոր է, ահավոր փոքրիկ է,- ներս մտնելով ու ինձ մատնացույց անելով շնչակտուր կմկմում է կողքի հարևանը, որը նկարիչ է և ինձանից ընդամենը տաս կամ տասնհինգ տարի է մեծ, ես ի՞նչ փոքրիկ նրա համար:

Մեր կողքի մուտքում ապրող և բոլորի մասին ամեն ինչ իմացող դերձակուհին, որը կարող է համարյա միաժամանակ լինել բակի տարբեր անկյուններում, երևի լսել է, որ «կրկնությունը գիտության մայրն է» ու նույն տեքստն ամեն օր խրատական տոնով բարձրաձայնում է.

- Ա՛յ ջանիդ մեռնեմ, այդքան գեղեցիկ արտաքինով, այդ հմայիչ կազմվածքով, մաթեմատիկայի օլիմպիադայում հաղթած, մի քանի տարի անց կստանաս պոլիտեխնիկական ինստիտուտի քո բարձրագույն կրթության վկայականը, ի՞նչ

գործ ունես քրդի հետ, հայ տղաներն աշխարհում վերջացե՞լ են, ինչ է:

Իսկ երբ պատահաբար այդ պահերին զնգում է հեռախոսը, բոլորը միաժամանակ խառնվում են իրար.

- Վա՛յ, չվերցնե՛ք, հաստատ Զորոն է,- գոռում են աջից ու ձախից:

- Չէ՛, լավ էլ պե՛տք է վերցնել,- արագ-արագ վրա է տալիս դերձակուհին ու շարունակում,- վերցրե՛ք, տվե՛ք ինձ՝ ես խոսեմ, այն օրը գցեմ, որ այս հեռախոսի համարն էլ մոռանա, տան տեղն էլ: Դրա՛ն տեսեք, ուզում է հայի հետ ամուսնանալ: Գիտե՞ք, թե ինչքան հայեր են կոտորվել նրանց ձեռքով:

Մայրս, որ շատ հանդարտ ու հավասարակշռված կին է ու հազվադեպ է նույնիսկ ձայնի տոնը բարձրացնում, սարսափած գոռում է.

- Աղջի՛կ ջան, խելքի՛ արի, նրանք շատ վրիժառու են ու խանդոտ, նա քեզ մի օր կմորթի, ո՞նց չես հասկանում,- ու շարունակում ավելի հանգիստ տոնով,- ախր, կամուսնանաս մեկ ուրիշի հետ, կմոռանաս նրան, հավատա՛ ինձ, ես էլ եմ սիրել մինչև ամուսնանալս, բայց դրանք դատարկ բաներ են, անցողիկ հրապուրանք: Իսկական սերը

դա ամուսինների միջև գոյություն ունեցող սերն է:

- Գուցե պետք է ոստիկանությա՞նը հայտնել,- արագ ավելացնում է Լաուրան՝ մայրիկիս ընկերուհին,- այո՛, այո՛, ձեր փոխարեն ես հենց այդպես էլ կվարվեի, թող բռնեն այդ տղային:

Ավագ քույրս, որը հազվադեպ է մասնակցում տան մեջ կատարվող իրադարձություններին՝ մշտապես որևէ գրքի ընթերցանության մեջ խորասուզված լինելու պատճառով, չկարողանալով անտեսել Լաուրայի սխալ խորհուրդները, աչքերը գրքից չկտրելով հակաճառում է.

- Այդ ո՞ր երկրում եք տեսել կամ լսել, որ իրար սիրող տղայի և աղջկա հանդիպումը հանցագործություն համարվի:

Հայրս ավելացնում է.

- Միևնույնն է, եթե երբևէ ամուսնանաս Զորոյի հետ, իմացի՛ր, որ ես չեմ սիրի քո երեխաներին ու դու այլևս հայր չունես:

Ես այդ պահին այնպես եմ խղճում երեխաներիս, որոնք դեռ չեն ծնվել ու «Կիկոսի մահը» վերնագրով երգիծական ստեղծագործությունն ինձ համար այլևս ծիծաղելի չի: Ինչպե՞ս չեն հասկանում մարդիկ այդ խեղճերի ողբերգական վիճակը,

հետո ինչ, որ նրա հերոսը՝ Կիկոսը, հորինված ու դեռ չծնված կերպար է:

- Հասկանո՞ւմ եք,- պատմում է հայրս ամեն մեկին առանձին,- այդ Զորոյի հայրն աշխատում է մեր կողքի սենյակում: Ես նրան ճանաչում եմ, նա բոլոր աշխատակիցների հանդեպ չափազանց անհանդուրժող է ու սարսափելի կռվարար բնավորություն ունի: Ոչ ոք նրան չի սիրում: Բոլորն ասում են, որ եզդիները համեստ մարդիկ են, իսկ նա ուղղակի բացառություն է:

«Իսկական սիրո մասին խոսելիս նրանք բոլորն էլ ստում են,- մտածում եմ ես,- կամ երևի ամենքին չէ, որ տրված է այսպիսի անձնուրաց սեր, թե չէ կհասկանային ինձ հիմա, իսկ հայրիկս, չէ՞ որ նա բանաստեղծ է, և նրա բանաստեղծությունների մեջ սերն է սավառնում իր հոգու տիեզերքում կամ մերժված սիրահարի իր սիրտը չի գտնում ոչ մի ամոքում, մի՞թե դրանք լոկ բառեր են, ինչո՞ւ է նա հիմա ինձ դատապարտում այս դժոխային տանջանքներին»:

Մի օր, երբ ազգային պայքարի այդ անխոնջ մարտիկները վերջապես լքում են մեր բնակարանը, տատիկս անսպասելի ծնկում է իմ դիմաց ու հուսահատ ձայնով սկսում խնդրել, որ հեռանամ Զորոյից: Տե՛ր Աստված, իմ հպարտ, խրոխտ, յոթանասունն անց

տատը, որից ժամանակին ամբողջ բակն է դողացել, ծունկի է իջել իմ՝ նվաստիս դիմաց ու այնպես է աղերսում արցունքները հազիվ զսպելով.

- Աղաչում եմ, երդվի՛ր իմ կյանքի գնով, որ այլևս չես հանդիպի նրան, խնդրում եմ:

- Չէ՛, տատի՛ ջան, չեմ կարող,- հեկեկում եմ ես,- ախր, ի՞նչ փոխվեց, դու հավանում էիր նրան, երբ կարծում էիր նա հայ է, ախր, նույն մարդն է նա: Վե՛ր կաց, խնդրում եմ:

- Չե՛մ վեր կենա մինչև որ չերդվես, բալե՛ս, ախր շատ եմ սիրում քեզ, բայց դու այս պահին կարծես գերեզման ես իջեցնում ինձ:

Այնքան սրտաճմլիկ է տատիկիս ձայնը, որ այլևս չեմ դիմանում և հանձնվում եմ: Նա խորը շունչ է քաշում և ուրախացած դուրս գալիս սենյակից: Քիչ անց զանգելով բոլորին հայտնում է այդ «հրաշալի» նորությունը, կարծես վերջապես հայ ազգը դաժան պատերազմից հետո հաղթանակ է տարել: Սկսվում են իմ կյանքի ամենադժբախտ ու ամենադաժան օրերը: Ես երբեք իմ խոսքը չեմ դրժել ու դա գիտեն բոլորը: Այնպես որ մենք բաժանվում ենք:

Ես չարացած փնտրում էի այդ բաժանման օրերի դաժան ու անմարդկային արտացոլանքները գետնի վրա շողշողացող

փշրանքների մեջ: Դե, իհարկե, թաքնվում էին ինձնից: «Ես դրանք չե՛մ վերցնի»,- որոշեցի ու մոտակա քարը վերցնելով փորձում էի փշրել այդ արդեն փշրված կտորները, ինչպես որ դրանք՝ այդ օրերը, փշրում էին իմ հոգին, մորթում ու ամենադաժան կերպով տանջամահ էին անում ինձ՝ հանելով իմ միջից ապրելու ամեն իմաստ: Դա տանջանք չէր, դա հոգու հենց այն նույն ցավն էր, երբ ամենահարազատ մարդու մահվան դեպքում գիտես, որ ժամանակն անկարող է բուժել կամ մեղմել քո վիշտը և մինչև կյանքիդ վերջը պիտի ապրես այդ կորստի ցավով:

...

Մենք, իհարկե, չենք հանդիպում, բայց մեր հեռախոսն ամբողջ օրը զնգում է, երբեմն քսան րոպեն մեկ, երբեմն երեք ժամը մեկ՝ մինչև կեսգիշեր: Երբ ինչ-որ մեկը վերցնում է լսափողը, զանգն անմիջապես անջատվում է, իսկ երբ ես եմ վերցնում, լռության մեջ լսվում է միայն զանգողի բյուրեղյա, զուլալ, երեխայի պես մաքրամաքուր շնչառությունը: Դա տևում է այնքան, մինչև ձեռքիցս վերցնելով անջատում են այն:

****

Ուլունքի մի փոքրիկ մասնիկ անընդհատ գլորվում էր դեպի ինձ, իսկ ես դա մի կողմ էի նետում փորձելով անտեսել այն: «Դե, ես քեզ չեմ ուզում հիշել,- մտքում բղավում էի վրան ու շարունակում,- և հետո՝ դա ի՞նչ կապ ունի իմ սիրո հետ»: Այն նորից աներեսի պես ցցվում էր աչքերիս առջև: Այդպես էլ չհասկանալով, թե ինչու վերցրեցի ու խնամքով տեղավորեցի այդ կտորը: Ահա՛ այն:

…

Դասասենյակը դեռ ոչ ոք չի լքել, չնայած՝ այդ օրվա դասերն ինստիտուտում արդեն ավարտվել են: Կուրսի ավագը բոլոր տղաներին խնդրում է մնալ՝ ասելով, որ կարևոր հարց կա քննարկելու: Մեր կուրսում հիմնականում սովորում են շրջաններից եկած ու հանրակացարանում ապրող ուսանողներ: Նրանք երբեք չեն շտապում տուն գնալ:

Հաջորդ օրը դասերից մի քանի ժամ առաջ համակուրսեցի ընկերուհուս բացատրում եմ և օգնում տնային հանձնարարությունը կատարել:

- Գիտե՞ս, թե ինչու էին դասերից հետո լսարանում հավաքվել տղաները,- հարցնում է

նա խորամանկ ժպիտի տակ ինչ-որ բան թաքցնելով:

- Եթե հիմա ասես, իհարկե, կիմանամ,- պատասխանում եմ փորձելով չմատնել անչափ մեծ հետաքրքրասիրությունս:

- Էն քեզ սիրահարված պինգվինին՝ հրազդանցի Հրաչին, մայրդ հրավիրել էր ձեր տուն, երբ դու տանը չէիր ու առաջարկել ամեն ինչ անել, որ քո սիրտը գրավի, քանի որ դու արդեն լքել ես Զորոյին:

- Լո՞ւրջ:

- Դու շարունակությունը լսի՛ր: Նա նաև խնդրել էր, որ եթե իրեն դա չհաջողվեր, գոնե մյուս տղաները փորձեին այնպես անել, որ դու սիրահարվեիր իրենցից որևէ մեկին ու շուտ մոռանայիր Զորոյին: Նա նույնիսկ ընտրակաշառք էր առաջարկել նրան, ով քեզ կընտրեր ու հաջողության կհասներ:

- Եվ ինչո՞վ էր կաշառել:

- Նա խոստացել էր, որ ում հաջողվեր քեզ հետ ամուսնանալ, կունենար բնակարան քաղաքում և փաստորեն՝ գրանցում մայրաքաղաքում, նաև, ինչ-որ արծաթե ու ոսկե զարդեր և մի ոսկյա ժամացույց էլ էր ցույց տվել ասելով՝ սրանք էլ հետը:

- Չեմ կարող հավատալ, ինչե՞ր ես ասում:

- Երեկվա հավաքին այս լուրերը մեր խմբի բոլոր տղաներին հայտնելուց հետո առաջարկվել է, որ ցուցակագրվեն նրանք, ովքեր համակրում են քեզ, և, որպեսզի տղայական կռիվներ չսկսվեն, ըստ ցուցակի հերթով փորձեն իրենց բախտը: Պատկերացնո՞ւմ ես, տասնութ տղաներից յոթը ցուցակագրվել են,- բարձրաձայն քրքջալով վրա է տալիս ընկերուհիս:

- Ինչո՞ւ ես ծիծաղում:

- Այդ ցուցակի մեջ է հայտնվել նաև Մնջոն:

Մնջոն նրա կեղծանունն է: Նա մի նիհար, աննկատ, ուրվականի պես մեկն է, որի ոչ իրական անունն եմ հիշում, ոչ էլ ձայնը, որովհետև նա երբեք չի խոսում: Խմբի բոլոր աղջիկները, այդ թվում և ես, մի տեսակ զզվանքով խորշում ենք նրանից, հատկապես՝ ինչ-որ լղոզված, շինծու, դեմքին կարծես թե դաջված իր մշտական ժպիտի պատճառով:

- Դե ուրեմն, ինչպես ասացիր՝ Հրաչը, Մնջոն, կարող եմ ենթադրել խմբի ավագը, էլ ո՞վ, ասա՛ ինձ մնացած չորս կամ հինգ տղաների անունները:

Ընկերուհուցս մեկ առ մեկ իմանալով նրանց անունները՝ որոշում եմ պատժել նրանց մայրիկիս հետ գործարքի մեջ մտնելու համար: Այդ հաշվենկատ սիրահարներին

տարբեր հանձնարարություններ տալով մի լավ չարչարում եմ՝ մեկն իմ տնային աշխատանքն է անում, մյուսը՝ ծանր իրերս կրում, որոշներն էլ իմ փոխարեն ժամերով հերթ են կանգնում, երբ ինչ-որ բան պիտի գնեմ ու երբ հերթը մոտենում է, զանգում են ինձ, որ գամ: Մի օր նկատում եմ, որ մի քանի հոգով նույնիսկ վիճում են, թե ով պիտի տնայիններս անի: Լրացուցիչ աշխատանքը նշանակում է մինչև առավոտ չքնել, որովհետև երբեմն սեփական տնայինները կարող են օրեր ու գիշերներ տևել, իսկ այդ օրվա աշխատանքը կառուցված է զուտ խճողված հաշվարկի վրա: Ես տանել չեմ կարող այն նախագծերը, որտեղ ոչ թե տրամաբանություն է պետք, այլ լոկ ճշգրիտ հաշվարկ: Իմ միջամտությամբ հաղթում է նա, ում թվային հաշվիչն ավելի նոր է և ժամանակակից:

Իրականում մայրս գլխի չի էլ ընկնում, որ տեղեկացված եմ իր այդ «հանճարեղ» մտահղացման մասին, և որ անձնուրաց կերպով դեպի ավելի բարեկարգ կյանք ձգտող այդ տղաներն իրենց սիրային պարտությունից գլուխներն ավելի ու ավելի են կորցնում, բայց դա բոլորովին էլ չի մեղմում իմ վիշտն ու չի փարատում իմ մենությունը:

****

Մեր բաժանման մղձավանջը տևում է տասնմեկ օր, և ես կյանքում առաջին անգամ դրժում եմ իմ երդումը:

Քաղաքային աղմկոտ աղջամուղջի վերջին նոտաներն են թափվում ավտոմեքենաների հռնդյունից ու տուն շտապող մարդկանց ոտնաձայներից: Արևի բյուրահուր ճաճանչները պարուրել են բարձրակերտ շենքերի կարմիր և շագանակագույն կտուրները: Անիմաստ ու տխուր թափառող ոտքերս ինձ տանում են մեր սիրած այգին ու դեպի մեր դատարկ նստարանը, բայց այն դատարկ չի … Աստվա՛ծ իմ, Զորոն է այնտեղ, մենակ նստած ու գլխահակ ինչ-որ բան է գրում: Այնքան խորասուզված է, որ ինձ չի նկատում: Մոտենում եմ ու ետևի կողմից փակում աչքերը.

- Վայ այս դո՞ւ ես: Չեմ հավատում, ի՜նչ լավ է, գտար ինձ:

- Իսկ ես քեզ չէի էլ կորցրել,- փորձում եմ ինքս ինձ ստել:

- Լսի՛ր, ես այլևս չեմ կարող այսպես, ես իրոք չեմ կարող ապրել առանց քեզ, ես ամեն օր գալիս էի ու այս նստարանին նստած սպասում քեզ: Ես գիտեի, որ դու կգաս, մի օր

հաստատ կգաս,- նրա այդ տաք ու կարծես շշնջոցի նմանվող ձայնն ականջներս շոյելով ներխուժում է դեպի մարմնիս բոլոր բջիջները:

- Ես հենց նոր բանաստեղծություններ էի գրում քեզ համար, բայց միայն քառատողեր են,- շարունակում է նա,- ոչինչ, որ կիսատ մնաց, կարդա՞մ:

- Իհարկե:

- Կանցնեն տարիներ, տարիներ անդարձ,
Իմ ու քո կյանքը մի բուռ հող դարձած,
Այդ հողի միջից մի ծաղիկ ծլած
Արևին կհայտնի մեր դառն կյանքն ապրած:

- Զո՛ր, ես չգիտեի, որ դու ստեղծագործում ես ոչ միայն վրձնով այլ նաև գրչով:

- Առաջին անգամ եմ հայերեն գրում, ռուսերեն ավելի լավ է ստացվում, չէ՞ որ ռուսական կրթություն ունեմ: Կարդա՞մ մեկ ուրիշ քառատող:

Ես գլխիս շարժումով համաձայնվում եմ:

- Իմ հեռու-հեռու հույսերը
Գնում են ինձնից, ախ, ընդմիշտ,
Իսկ նրանց հետ էլ իմ սերը
Լքում է հանդարտ ու հանգիստ:

- Վա՛յ Զոր ջան, էլ երբեք-երբեք չեմ լքի քեզ: Ինձ համար էլ էր շատ դժվար: Իմ այդ որոշումը՝ տատիկիս տված իմ խոսքը չդրժելը, ինքնասպանության նման մի բան էր:

Մենք երկար զրուցում ենք: Պատմում ենք, թե ինչքան սխալ է այս բաժանումն ու անիմաստ, հիշում ենք զվարճալի դրվագներ մեր առօրյայից ու ծիծաղում:

- Ինչո՞ւ են, ախր, մեր ծնողները մեզ այսքան տանջում,- հոգոց հանելով, բայց պատասխան չակնկալելով նայում է ուղիղ աչքերիս մեջ, կարծես պատասխանն այնտեղ է գրված ու ես էլ դրանից անտեղյակ եմ:

- Զո՛ր, երբեմն ինձ թվում է, թե մեր պատմությունն ինչ-որ նմանություն ունի Ռոմեոի և Ջուլիետայի սիրո պատմության հետ: Նույն դժվարությունների միջով ենք անցնում:

- Ի՞նչ, մենք է՞լ ինքնասպան լինենք, որ հետո մեր ծնողները զղջան մեզ չհասկանալու համար,- քմծիծաղ տալով ավելացնում է նա:

- Բայց վատ միտք չէ, գիտե՞ս,- ժպտում եմ ես ու անմիջապես սարսափում մի ողբերգական դեպք հիշելով,- Զո՛ր, մի քանի տարի առաջ, մեր դպրոցի ավարտական դասարաններից մեկում սովորող մի աղջնակ իրենց կտուրից

ցած էր նետվել ու մահացել: Այդ ճակատագրի մեղավորը նրա հայրն էր, որն արգելել էր աղջկան այդ օրը սիրած տղայի հետ հանդիպման գնալ:

- Դու երբևէ եղե՞լ ես բարձրահարկ շենքի տանիքին,- անսպասելի հարցնում է Զորոն:

- Չէ՛, մտքովս էլ չի անցել:

- Գիտե՞ս, թե ի՛նչ հաճելի զգացում է այդ բարձրությունից ցած նայելը: Մարդիկ կարծես մրջյուններ լինեն և ամեն հոգս ու դժվարություն այնպես չնչին է դառնում, նույնիսկ երբեմն էլ վերանում է, գնանք, ինքդ կհամոզվես,- առաջարկում է Զորոն:

Մի քանի րոպե անց գեղակերտ շենքերից մեկի տանիքին ենք: Իրոք, հրաշալի է: Մեր շուրջը նայելիս թվում է, թե բացի մեզանից, երկնքի ամպոտված կապույտից ու կարմրածածկ տանիքներից ուրիշ էլ ոչինչ չկա ամբողջ աշխարհում: Մենք ամուր բռնել ենք միմյանց ձեռքերը, որ հանկարծ չսայթաքենք և ցած չընկնենք, չնայած՝ տանիքն ուղիղ է, առանց որևէ թեքությունների: Զգուշորեն մոտենում ենք եզրին՝ ցած նայելու ու զգալու այն վիթխարի բարձրությունը, որտեղ կանգնած ենք:

Երեկոն հանդարտ ժպտալով իջնում է ծառերի սաղարթներից ներքև ու իր

հետզհետե մթնող գիշերային ռետինով արագ ջնջում արևի նկարած վերջին ստվերները մայթերի վրայից:

- Արդեն մութն ընկնում է ու մենք պիտի բաժանվենք, իսկ եթե մեր ծնողներն ավելի խիստ գտնվեն, գուցե այլևս չկարողանանք հանդիպել, Զո՛ր, գուցե սա մեր վերջին երեկոն է, որ միասին ենք:

- Եթե իմանամ, որ իրոք, այլևս երբեք քեզ չեմ տեսնելու, հաստատ կնախընտրեմ այս տաս հարկանի շենքի կտուրից ցած նետվել,- անկեղծորեն խոստովանում է նա:

- Դե, արի ներքև ցատկենք, Զո՛ր ջան, և մեր սիրո պատմությունը դարերով կպատմեն ու միշտ կհիշեն մեզ՝ խեղճ ու անհույս սիրահարներին, մեր մասին ֆիլմեր կնկարեն:

- Ի՞նչ, դու իրո՞ք պատրաստ ես հանուն մեր սիրո վերջ տալ քո կյանքին: Դե, ուրեմն, ե՛ս էլ եմ պատրաստ:

Այդ միտքն, իհարկե, խելահեղություն է: Ճիշտ է, մենք դեռ հիմարություններ գործելու տարիքում ենք, մեկը՝ տասնյոթ, մուսը՝ տասնութ, բայց եթե կյանքդ ինքնակամ զոհում ես, դա պիտի լինի հանուն հայրենիքի, հանուն ինչ-որ լավ գաղափարի, իսկ հանուն սիրո՞... Ի՞նչ օգուտ պիտի ստանա մեր սերը մեր չգոյությամբ:

Մենք զննող հայացքներով իրար ենք նայում՝ հասկանալով, որ դա սիրո ապացույց լինելու ամենատխմար ձևն է: Իսկ ի՞նչ վիճակում կհայտնվեն մեր ծնողները, ինչի՞ կնմանվի նրանց ապրելն այդ ողբերգությունից հետո, չնայած, մյուս կողմից էլ՝ մեր սերը սպանելուց հետո լավ կլինի իմանան, որ դրանով մե՛զ են սպանել: Ես նայում եմ ցած ու սարսափում, պետք է ետ գնալ քանի դեռ վայր չենք ընկել:

«Բայց հիմա ես Զորոյի աչքին ստախոս ու ահավոր պարծենկոտի մեկն եմ: Հայտարարություններ եմ անում, որ պատրաստ եմ զոհվել հանուն սիրո և վախկոտի պես ետ քաշվում,- մտածում եմ,- իսկ եթե ցատկե՞մ... իհարկե, նա ինձ կբռնի նույնիսկ իր կյանքի գնով՝ առանց վախենալու, որ իմ ծանրության, ցատկի ուժգնության ու երկրի ձգողականության ուժերը միասին ինչ-որ բանաձևով հաշված կարող են գերազանցել իր բազուկների ուժին և ինքն էլ ինձ հետ ցած կգլորվի»:

Նայում եմ նրա բազուկներին, հաստատ կբռնի, իսկ եթե վրիպի՞ կամ երկուսով ցած ընկնե՞նք: Օ՛, դա մեր վրեժը կլինի մեր ծնողներից ու այլևս աշխարհում ոչ մի ծնող չի հանդգնի բռնանալ սիրող սրտերի վրա: Չէ, վստահ եմ՝ կբռնի:

- Հանուն բոլոր տառապող սիրահարների՛,- բացականչում եմ ու առյուծակամ նետվում առաջ:

Ամեն ինչ կատարվում է մի ակնթարթում: Ես մի պահ ինձ զգում եմ օդում՝ լայնարձակ տարածության մեջ, և դեռ չհասցնելով նույնիսկ վախենալ, հայտնվում եմ կտուրի վրա ընկած ու գոտկատեղումս զգալով նրա ամուր բազուկները՝ արագ ոտքի կանգնում: Ես առաջին անգամ եմ տեսնում նրան այդպես շփոթված: Արցունքներն աչքերին ու գլուխը բռնած նա հեկեկում է.

- Ախր, դու էս ի՞նչ ես անում: Բա որ չհասցնեի…

****

Անցան տարիներ, կյա՞նքը մեզ բաժանեց, Աստվա՞ծ, թե՞ մենք ինքներս: Ախ հա, գուշա՛կը: Միայն նա կարողացավ խղճիս վրա այնպես ազդել, որ Աստված ստիպված այդ դրախտային «Սրտի աչք» սիրո մոլորակից մեզ վտարեց, ինչպես Ադամին ու Եվային՝ բնակվելու միայն Երկրի վրա: Չնայած, դա անարդար էր՝ մենք ոչ մի արգելված խնձորի նույնիսկ մոտ չէինք եկել, ուր մնաց թե համը փորձեինք: Երևի դա էր պատճառը, որ հետագայում ապրելով Երկիր մոլորակի տարբեր կիսագնդերում՝ մեր հոգիներին

թույլատրվեց մտովի թռչել դեպի այդ սրտաձև կապույտ երանությունը: Նրանք այնտեղ հանդիպում էին ցանկացած պահի, համարյա ամեն օր, կիսվում իրենց դժվարություններով, ուժ տալիս միմյանց և ոչ մի մարդկային նախանձ, ոչ մի մոգական ուժ այլևս չէր կարող նրանց բաժանել:

«Հիմա կգտնեմ այդ գուշակին հիշեցնող կտորը,- որոշեցի ես,- որտե՞ղ փնտրեմ: Հա, եկեղեցուց անմիջապես հետո է: Այ սա՛ է»:

...

Զորոն առաջին անգամ է մտնում հայկական եկեղեցի: Նրանք վերջերս են տեղափոխվել Թբիլիսիից, որտեղ երկար տարիներ ապրել են և աշխատել՝ մայրը բարձր դասարանների մաթեմատիկայի ուսուցչուհի, իսկ հայրը՝ բանաստեղծ: Տեղափոխվել են, որովհետև Զորոն նախընտրել է ուսումը շարունակել Երևանի գեղարվեստի ակադեմիայում: Եկեղեցու ներսում նա այնպիսի հափշտակությամբ և զարմանքով է նայում սրբապատկերներին ու վառվող մոմերի կրակե պարախմբին, որ կողքից մարդիկ կարծում են, օտարերկրյա հյուր է: Նրան նայելիս հոգիս երջանկության մեջ սավառնում է եկեղեցու գմբեթից դուրս ու խառնվում իմ սիրո մոլորակի կապույտին:

Չնայած, հիասքանչ օր եմ անցկացնում ու հանգիստ քնում եմ, բայց գիշերվա երազս արթնանալուն պես ինձ հանգիստ չի տալիս: Այն շատ տպավորիչ է, և ես պատմում եմ ընտանիքիս անդամներին: Մայրս խորհուրդ է տալիս իր հետ միասին լինել գուշակի մոտ մեկնաբանելու երազս: Սովորաբար, գուշակի մոտ գնալու բոլոր առաջարկները միշտ մերժում եմ, բայց սա ուրիշ դեպք է՝ երազիս խորհրդավոր ծերունին ոչ մի կերպ չի հեռանում մտքիցս:

- Չմոռանաս հետդ վերցնել քո և Զորոյի միասին նկարված լուսանկարը,- խնդրում է նա,- մինչև դու գաս, ես այնտեղ կլինեմ՝ ինչ-որ գործեր ունեմ:

Երբ նկուղի դուռը բացում եմ, որտեղ ապրում է գուշակը, իրոք, մայրս արդեն այնտեղ է:

Խոնավ ու կիսամութ սենյակի խորհրդավոր գորշագույն թափանցիկության մեջ մարդիկ կարծես գիշերային ուրվականներ լինեն: Մի մասը շրջանաձև նստած է սեղանի շուրջ, մյուսները՝ պատի մոտ իրենց հերթին են սպասում: Ծուռումուռ քարե աստիճաններով զգույշ ու վախվորած փորձում եմ իջնել ցած: Նա՝ այդ գուշակը, մի սովորական նիհար ծեր կին է, նրա ետևում հենց մայրս է կանգնած: Ինձ տեսնելուն պես կախարդի նմանվող այդ կինն անսպասելի դադարեցնելով հերթական հաճախորդի ապագան գուշակելը՝ այնպիսի խորհրդավոր ձայնով է ինձ ներս հրավիրում , որ փշաքաղվում եմ.

- Արի՛, արի՛, ես գիտեմ ինչու ես եկել: Դու երազ ես տեսել,- ասում է ու շարունակում,- մի ալեհեր մորուքով խորհրդավոր ծերունի է եկել քո երազում ու այպանել մեր եկեղեցին աղտոտելու համար:

Ես սարսափից քարանում եմ: Նա ինչպե՞ս է կարողանում ոչ միայն իմանալ, որ ես երազի համար եմ եկել, այլ նաև գուշակել ու ինձ պատմել իմ երազը: Ուրեմն, իրոք, կարող

Է կանխորոշել ապագան, քանի որ անցյալն էլ է ճիշտ տեսնում: Գուշակը հանդիսավոր ձայնով շարունակում է.

- Դա նշանակում է, որ դու ինչ-որ չկնքված մարդու հետ եկեղեցի ես մտել, որն Աստծուն դուր չի եկել և Աստված երազով զգուշացում է արել քեզ:

Աչքերիս առջև հայտնվում է այն օրը, որ Զորոյի հետ եկեղեցի էի գնացել ու ամեն ինչ այնքան հրաշալի էր մեր կյանքում ու արցունքներս, առանց թաքնվելու փորձ իսկ անելու, դանդաղ սկսում են հոսել դեմքիս վրայով: Ես այդ թաց կաթիլները մաքրելու մասին չեմ էլ մտածում, շունչս պահած սպասում եմ, կարծես հիմա դատավորը, ուր որ է, կարդալու է իմ մահապատժի հրամանը, իսկ ես այդպես էլ դեռ չեմ կարողացել ապացուցել իմ անմեղությունը: Փորձում եմ գուշակել այդ գուշակի գուշակությունը: «Հիմա կասի, որ իմ ու Զորոյի ճակատագրերը տարբեր ճանապարհներով պետք է գնան»,- ահասարսուռ մտածում եմ ես:

- Նկարը տո՛ւր, նկարը,- հուշում է մայրս:

Ես նրան եմ պարզում մեր լուսանկարը:

- Ահա,- ասում է նա, - սա է մտել եկեղեցի քեզ հետ ու դու պետք է հեռանաս սրանից:

Ես բարձրաձայն սկսում եմ հեկեկալ, հետո մի կերպ ինձ տիրապետելով ու դիմելով գուշակին, վստահորեն ճամարտակում եմ. «Ամպրոպաճայթ կայծակներն անգամ սպառնան բոցավառել ինձ, միևնույնն է, չե՛մ հրաժարվի ամեն օր նրան տեսնելուց»:

Գուշակը նկարին նայելով շուռ է գալիս մայրիկիս կողմն ասելով.

- Լա՛վ էլի, սիրում են իրար, էս անմեղ երեխեքից ի՞նչ եք ուզում:

Նկատում եմ, որ մայրս դեմքի միմիկաներով ինչ-որ շարժումներ է անում, և գուշակը նորից շուռ գալով իմ կողմն ավելացնում է.

- Քո երազի մեջ այդ ալեհեր ծերունին եկել էր քեզ զգուշացնելու, որ եթե անհապաղ չհեռանաս այդ տղայից, Աստված կկուրացնի հորդ աչքերը:

- Հորս աչքե՞րը,- սիրտս կանգնում է սարսափից,- բայց հայրս ի՞նչ մեղք ունի,- կմկմում եմ:

- Մի ընդհատի՛ր ինձ, աղջի՛կ,- բարկացած ինձ է նայում գուշակը,- կգնաս Աբովյանում գտնվող մի հին եկեղեցի կա, նոր գնված ավելով կավլես այն, ինչ աղտոտել ես այդ չկնքվածի հետ եկեղեցի մտնելով ու անմիջապես կլքես այդ տղային:

Վերադարձին մայրս հրաժարվում է ինձ հետ գալ, պատճառաբանելով, որ գուշակի մոտ Լաուրային է սպասելու, որը չգիտես ինչու, ուշանում է: Ես ամբողջ ճանապարհին հեկեկում եմ, երբեմն բարձրաձայն, երբեմն էլ լուռ ու զսպված՝ անտեսելով բոլոր կարեկից անցորդների խղճահարված հայացքները: Նրանց երևի թվում է, թե հարազատներիցս մեկին կորցնելու լուրն եմ ստացել, ի՞նչ իմանան, որ շուտով հորս աչքերն իմ պատճառով կորցնելու լուրն եմ ստացել:

Տխուր նայեցի դեռևս գետնին մնացած կապույտ փշուրներին: «Կարծես անձրև է սկսվում, շուտ ավարտեմ մնացած փշրված բեկորները հավաքել»,- անհանգստացած

մտածեցի ես՝ մի քանի թաց, փայլփլուն կաթիլներ ապակու կտորների ու ձեռքերիս վրա հայտնաբերելով: Մի ակնթարթ անց հասկացա, որ դրանք անձրևի կաթիլներ չէին՝ նույնիսկ այդքան տարիներ անց իմ այդ հիշողությունից աչքերս էին լցվել արցունքով, իսկ ես չէի էլ նկատել: Պետք էր գտնել այդ օրվա պատմության շարունակությունը: Ահա, կարծես սա էր: Արագ ձեռքս մեկնեցի, որ վերցնեմ այդ շատ տարօրինակ ծուռումուռ փշրված կտորը, երևի շտապելուց կամ անզգուշությունից ապակին կտրեց ձախ ձեռքիս բութ մատը: Արյան փոքրիկ կաթիլները մատիցս հոսեցին ուլունքի այդ փոքրիկ կտորի մակերեսին և ընկնելով ցած՝ խառնվեցին գետնի վրայի փոշեծածկ գույնզգույն տերևներին: Այդ ի՞նչ էր, նայեցի արյունոտ ապակու փշուրից ներս:

...

Ավտոբուսի կանգառում պայմանավորվել եմ հանդիպել նրան, ում ըստ գուշակի շուտով ընդմիշտ հրաժեշտ եմ տալու: Վստահ եմ, որ նա դեռ այնտեղ է, չնայած ուշացել եմ արդեն մոտ երեք ժամ՝ առաջին անգամը չի: Ինչքան էլ ուշանամ նա գիտի, որ մեկ է՝ կգամ ու ես էլ գիտեմ, որ մեկ է՝ կսպասի:

- Ի՞նչ է պատահել,- շփոթված հարցնում է Զորոն իմ տագնապած դեմքին նայելով:

- Խե՛ղճ իմ հայր, - ասում եմ,- նա նույնիսկ չգիտի ինչ տեսողական արհավիրք է կախված իր գլխին իմ պատճառով,- ու պատմում եմ ամբողջ ողբերգությունը, որի մեջ հայտնվել եմ:

- Իսկ եթե գուշակը ստու՞մ է: Մի՛ հավատա գուշակներին, խնդրում եմ,- հուսահատ համոզում է ինձ Զորոն:

- Բայց նա այնքան ճիշտ պատմեց երազս: Իմ բարի ու խեղճ հայրի՛կ, նա ինչքան է սիրում երկնքին նայել ու զմայլվել լուսազարդ շղարշով պատված թափանցիկ ամպերով, հրճվել գարնան առաջին ձնծաղիկի նուրբ տեսքով ու քսել այն իր աչքերին փափուկ փետուրի պես, որ աչքերը քնքշություն ստանան: Երբ ծովափ էի մեկնում, խնդրում էր ինձ. «Իմ աչքերն էլ տար քեզ հետ, ես շատ եմ կարոտել ծովի կապույտը, բազմաճամուկ ալիքների հոգիս գուրգուրող անդորրն ու երբեմն էլ քամու դեմ կռվող խրոխտ ալիքների փոթորկածին ծածանումները»: Հասկանու՞մ ես, Զո՛ր, ջան, նա նույնիսկ չի կարողանա բանաստեղծություն գրել և ինչպե՞ս պիտի ապրի այս աշխարհում այլևս չտեսնելով այս աշխարհը:

- Դա տեղի չի ունենա, վստահ եմ:

- Չէ, Զո՛ր, սա արդեն իմ ուժերից վեր է: Ես չե՛մ կարող իմ անձնական երջանկությունը

կառուցել դժբախտացնելով ծնողներիս: Մենք պետք է բաժանվենք:

- Բաժանվել ու չտեսնե՞լ միմյանց, նորի՞ց,- վշտանում է Զորոն, - բայց դա անհնար է:

Նկատում եմ, որ բազմաթիվ կինոնկարներից մեկում այսպիսի հանգուցակետի հասած զույգի ճակատագիրը շատ նման է մեր իրավիճակին: Նրանք կյանքի թելադրանքով ընդմիշտ պիտի հեռանային իրարից՝ ապրելու տարբեր պետություններում և որոշեցին իրենք իրենց քույր և եղբայր հռչակել Աստծո առաջ:

- Զո՛ր:

Զորոն կարծես անմիջապես կարդալով միտքս՝ ընդհատում է ինձ.

- Գիտեմ, ինչ ես ասելու, դու այն կինոնկարն ես հիշել, բայց լավ պիտի մտածենք:

- Դա հանճարեղ լուծում է, Զո՛ր ջան, քննարկելու կարիք էլ չկա: Մենք այնքան հարազատ ենք, որ չենք կարող ապրել առանց իրար: Դառնալով իրական հարազատներ՝ քույր ու եղբայր, մենք միմյանց չենք կորցնի և չամուսնանալով իրար հետ՝ մենք, անշուշտ, կերջանկացնենք մեր ծնողներին:

- Եվ ի՞նչ, մի օր ես կունենամ իմ առանձին ընտանիքը, իսկ դու կամուսնանաս ինչ-որ

մեկի հե՞տ: Ես արդեն ատում եմ այդ ինչ-որ մեկին:

- Զո՛ր, եթե ինձ անկեղծ ես սիրում, ուրեմն չես ատի, կուրախանաս իմ երջանկությամբ:

- Իսկ դու իրո՞ք երջանիկ կլինես:

- Կարևո՛ր չէ, կարևորը՝ գոհ կլինեմ, որ իմ ընտանիքը երջանիկ է:

Մենք հաղթահարելով մեր գերբնական սիրո ձգողականության ուժը՝ կայացնում ենք մեր անմեղ սիրո մահապատժի որոշումը: Նա պիտի մեռնի դանդաղ և ամեն օր մինչև մեր կյանքի վերջը, իսկ նրա հոգին ազատ է ապրելու միայն մեր երազանքներում՝ մեր սիրո՝ «Սրտի աչք» կոչվող կապույտ մոլորակում: Մի քանի ժամ անց մենք արդեն մեզ հարազատ դարձած զբոսայգում ենք: Մեր սիրած «Պտտվող անիվ» կարուսելի ամենաբարձր կետին հասնելուն պես Զորոյի գրպանի փոքրիկ դանակով ծակում ենք մեր ձախ ձեռքի բթամատերն ու արյունածոր մատները միացնելով խառնում մեր արյան կաթիլներն իրար, ապա՝ բարձրաձայն դիմելով տիեզերքին ու Աստծուն, հայտարարում ենք մեզ քույր և եղբայր:

Ակամայից հայացքս ուղղեցի քիչ առաջ ջարդված ապակուց վնասված մատիս: Աստվա՛ծ իմ, արյունը հոսում էր բթամատիս

հենց այն նույն կետից ինչ տարիներ առաջ կարուսելի մեջ: Ա՛յ քեզ զուգադիպություն:

****

Ժամանակը ճախրեց ճակատագրին ընդառաջ: Ես ամուսնացա, բայց Զորոն կարծես չէր համակերպվում այդ իրավիճակին՝ ես նրան հաճախ էի տեսնում թաքնված պատերի տակ, փողոցի մուտքերում, երբ ամուսնուս հետ անցնում էինք այդ ճանապարհով: Եթե պիտի օդանավ նստեինք, նա օդանավակայանում էր, եթե պիտի կինոթատրոն գնայինք, նա արդեն հերթի մեջ էր: Լուռ, ուրվականի պես հեռվից հեռու հետևում էր՝ երբեմն-երբեմն անհետանալով ամբոխի մեջ: Հետագայում իմացա, որ տեղեկությունները ստանում էր մեր ընդհանուր ընկերուհուց՝ Լիաննայից:

Մենք ընտանիքով տեղափոխվեցինք բնակվելու Ամերիկայի Միացյալ Նահանգներ: Երկար ժամանակ միայն կցկտուր լուրեր էի ստանում նրա մասին տարբեր ծանոթներից: Զորոն ամուսնացել էր հայուհու հետ, որն անցնելով այդ ծնող-զավակ ազգամիջյան մարտերի միջով հաղթանակ էր տարել, քանի որ Զորոյի մայրն օգնել էր նրանց այդ պայքարում: Նա, տեսնելով տղայի տանջանքներն իր առաջին սերը կորցնելուց

հետո, որոշել էր երկրորդ անգամ չվշտացնել նրան:

Երբ սկսվել էր արցախյան քառօրյա պատերազմը, Զորոն եզդիների մի փոքր ջոկատի կազմում միացել էր ազատամարտիկներին: Ես դրա մասին իմացել էի շատ պատահական մի հեռուստահաղորդումից: «Հիմա անշուշտ հեշտությամբ կգտնեմ այդ տարիների հիշողություններս, չէ՞որ հողախառն գետնին ընդամենը փշրված ուլունքի մի քանի կտոր է մնացել»,- աչքի պոչով ավտոբուսին նայելով մտածեցի ու ձեռքս գցեցի առաջին պատահածին: Այն նորից վայր ընկավ մատներիս միջից ու կորավ: Այդպես էլ չկարողացա հիշել, թե որ դրվագն էր, երևի հեռախոսի զա՞նգը:

...

Զանգը հնչելուն պես անմիջապես վերցնում եմ լսափողը: Կարծես Հայաստանից է՝ ինչ-որ անծանոթ համարից: Արտերկրյա զանգեր հազվադեպ եմ ստանում և ինքս էլ խուսափում եմ զանգել վճարման ֆինանսական մեծ դժվարությունների պատճառով:

- Ալո՛, բարև՛ Ձեզ, ես Զորիկի կինն եմ:

- Ո՞ր Զորիկի, - փորձում եմ մտովի հիշել այդ անունով բոլոր ծանոթներիս ու բարեկամներիս:

- Զորոյի:

Շունչս սկսում է կտրվել, այտերս այրվում են, լսափողը քիչ է մնում վայր ընկնի դողացող ձեռքիցս: Այնպիսի զգացողություն ունեմ, կարծես Զորոն հենց ինքն է ինձ զանգել: Փաստորեն, կինը նրան Զորիկ է անվանում:

- Անկեղծ ասած, միշտ ցանկացել եմ ծանոթանալ Ձեզ հետ: Զորիկն ինձ շատ է պատմել Ձեր մասին: Ամուսնության առաջին տարիներին շատ էի վիրավորվում՝ ինչ որ անեի, ոչ իր սրտով էր, ոչ էլ տնեցիների: Բոլորը, չգիտես ինչու, ինձ համեմատում էին Ձեզ հետ ասելով, որ դուք հիմա այսպես կասեիք կամ այդպես չէիք վարվի: Ուզում էի ընկերանալ Ձեզ հետ ու նմանվել Ձեզ:

«Ի՜նչ հաճելի ու անկեղծ տիկին է,- մտածում եմ,- բայց ոչ, ընկերությունն իմ ուժերից շատ վեր է, հաճախակի հանդիպելն ընտանիքներով կամ լսելն իրար մասին, դա նույնն է, ինչ սեփական վերքերն անվերջ թարմացնելը»:

- Ի՞նչ լուր կա Զորոյից, - հարցնում եմ, - գիտեմ, որ քաջաբար մարտնչում է հայրենիքի համար:

- Զորիկը մեկնելուց առաջ խնդրեց, որ Ձեզ զանգեմ, բայց կարծես ինքն էլ հեռախոսի համարը չուներ: Շատ չարչարվեցի մինչև Ձեր համարը գտա, նույնիսկ մեր տեղական բժշկական կենտրոն գնացի, իմանալով, որ Ձեր ընկերուհիներից մեկն էլ է այնտեղ հաճախում՝ Լարիսան: Այնտեղից վերցրեցի Լարիսայի հեռախոսի համարը, հանդիպեցի նրան, ի դեպ՝ շատ անուշիկ ու բարի կին է Ձեր ընկերուհին: Նրանից իմացա այս հեռախոսահամարը և վերջապես կարողացա կապվել Ձեզ հետ:

- Դե ինչ, լսում եմ Ձեզ, երևի ինչ-որ օգնության կարի՞ք ունեք:

- Ոչ, շնորհակալ եմ: Զորիկը խնդրեց Ձեզ հաղորդել, որ վայրկյան անգամ չկասկածեք, որ մենք հաղթելու ենք: Ամուսինս շատ հայրենասեր է, ինչպես ինքն է սիրում հպարտորեն ասել՝ ես հայ ժողովրդի եզդի զավակն եմ:

- Քաջասիրտ եզդի զավակը,- ավելացնում եմ:

- Հա, քիչ էր մնացել մտքիցս թռներ, նա խնդրեց նաև հաղորդել, որ չկորցնեք... Ճիշտն ասած՝ լավ չհասկացա, ինչ-որ կապույտ ուլունքի մասին էր ասում: Խնդրում էր այն ապահով տեղում պահեք ու հանկարծ չկորցնեք:

- Մի անհանգստացեք, չեմ կորցնի, նա իմ կապույտ աչքի ուլունքի մասին է հիշեցրել,- բացատրում եմ տիկնոջը,- երևի Զորոն դեռ հավատում է, որ այն իրեն կփրկի ամենուր, նույնիսկ մարտի դաշտում:

- Մի հարց կարելի՞ է Ձեզ տալ, - մի փոքր կմկմալով արտաբերում է նա,- անհարմար եմ զգում հարցնել, թեև տարիներով շատ եմ ցանկացել իմանալ դրա պատասխանը, դե դա շատ անձնական բնույթ ունի: Խնդրում եմ, անկեղծ ասեք, Դուք կարոտո՞ւմ եք Զորիկին:

- Ես Հայաստանն եմ կարոտում,- պատասխանում եմ կտրուկ և ավարտուն տոնով:

- Դե, ես շատ ուրախ եմ, որ վերջապես ծանոթացա Ձեզ հետ, երբ Հայաստան գաք, անպայման այցելեք մեզ:

Մի քանի շաբաթ հետո տեղեկանում եմ տիկնոջից, որ Զորոն ողջ և առողջ վերադարձել է տուն, իսկ հեռախոսիս համարը խնդրում եմ, որ չտա նրան, քաջ գիտակցելով, որ դա կխաթարի նրանց ընտանեկան անդորրը:

Նայեցի ետ: Ավտոբուսի վարորդը կարծես մոռանալով, որ քիչ առաջ շտապում էր, խոսքի էր բռնվել ծխախոտ ծխող տղամարդկանցից մեկի հետ: Կարծես երկու փշուր էր մնում, որ

վերցնեի, իսկ անվասայլակով կինն արդեն ավտոբուսի պատուհանից դուրս էր նայում: Հոգ չէր, դեռ կհասցնեի բոլոր փշուրները հավաքել:

...

Տարիներ անց ես մեկնում եմ Հայաստան արդեն չափահաս երեխաներիս հետ: Ինքնաթիռից իջնելուն պես տղայիս հիշեցնում եմ, թե ինչպես էր առաջին անգամ հայրենիք այցելելիս զարմացած վազվզում զրույցի բռնված մարդկանց շուրջ ու իր վեց տարեկանի ապշած աչիկներով նայում նրանց դեմքերին:

- Մա՛մ, հիշո՞ւմ ես, ինչ ասացի այդ պահին: Դե, ես շատ փոքր էի ու հայերեն տառերն էլ դու նոր էիր սովորեցրել ինձ:

- Իհա՛րկե, հիշում եմ, դու զարմացած բացականչեցիր.«Վա՛յ, բոլորը հայերեն խոսել գիտեն, էս որտե՞ղ են սովորել», և շրջապատի մարդիկ ծիծաղեցին:

- Իսկ հիշո՞ւմ ես, մա՛մ, այդ օրվանից մի շաբաթ հետո մենք մեկնեցինք Վրաստան՝ Սև ծովի ափին հանգստանալու, և ես կյանքում առաջին անգամ ծովը գնացքի միջից տեսնելով զարմացա. «Վա՛յ, ծովը կապո՛ւյտ գույն ունի, բա ասում եք Սև ծով ենք հասել»:

Ինչքան էլ երեխաներիս հետ խոսում ու ծիծաղում եմ, ինչ-որ գաղտնի տխրություն ինձ հանգիստ չի տալիս: «Ամերիկայի Միացյալ Նահանգներ մեկնելիս ա՛յ, այնտեղ, այն պատի հետևում թաքնված մեզ իր գաղտնի ներկայությամբ հրաժեշտ էր տալիս Զորոն ու դա վերջին անգամն էր, ինչ տեսել էի նրան»,- մի տեսակ ափսոսանքով հիշում եմ ես: Կարծես երեխաներիս մասին մի պահ մոռացած՝ անհույս հայացքով նրան եմ փնտրում: «Գուցե Լիաննան նորից հայտնած լինի, որ այստեղ ենք ու ես պատահաբար տեսնե՞մ նրան»,- մտածում եմ: Բայց դա անհնար է՝ Զորոյի կինը վերջերս է զանգել ինձ ու հայտնել, որ ամուսինը սրտի վիրահատություն է տարել: Զորոն վիրահատությունից առաջ շատ է ցանկացել հեռախոսով խոսել ինձ հետ, բայց նա իմ խնդրանքը հիշելով հեռախոսահամարս չի տվել: Քանի որ արձակուրդս շատ կարճ է՝ ընդամենը մեկ շաբաթ, որոշում եմ հենց երեկոյան էլ երեխաներիս հետ այցելել Զորոյի ընտանիքին: Վերջապես մոտիկից կծանոթանամ կնոջ հետ ու նաև կապացուցեմ Զորոյին, որ ես՝ իր քույրը, այսքան տարիներ կապ չունենալով հանդերձ, այսօր իմ եղբոր կողքին եմ նրա ծանր առողջական խնդիրների պահին:

Մեքենայի վարորդը, որը մեզ դիմավորում է օդանավակայանում մի շատ սովորական երևանյան շատախոս տղամարդ է:

- Քույրի՛կ ջան, նկատելի է, որ տեղացի չեք, դուք Փարիզի՞ց եք ժամանել:

- Ո՛չ, Լոս Անջելեսից:

- Մի բան հարցնեմ, էլի: Ինձ միշտ հետաքրքրիր է եղել իմանալ, թե էդ ի՞նչ են զգում որոշ մեր հայրենակիցներ, երբ արտասահմաններից օդանավով Հայաստան գալով, ոտքերը գետնին դնելուն պես սկսում են կռանալ ու հողը համբուրել:

- Դուք, Ձեր տա՞նն եք ապրում, ուր ծնվել ու մեծացե՞լ եք,- պատասխան սպասող հայացքով նայում եմ նրան:

- Այո՛:

- Հիմա ինչ որ կհարցնեմ, ոչ բոլորի հետ է պատահում,- բացատրում եմ նրան,- դուք մտնելով տուն հեռավոր վայրերից ու երկար բացակայությունից հետո, զգացե՞լ եք ինչքան հարազատ են պատերը, հատակը, Ձեր սենյակը և ինչքան էիք Դուք նույնիսկ Ձեր իրերը կարոտել:

Մի պահ մտովի լռելյայն պատկերացնելուց կամ հիշելուց հետո նա պատասխանում է.

- Անշուշտ, դա մի յուրօրինակ կարոտ է: Հարազատներիս էլ շատ եմ կարոտած լինում, բայց դա մի ուրիշ զգացում է, բառերով չեմ կարող ասել: Ես միայն իմ տանն եմ ինձ հանգիստ զգում:

- Դե հիմա այդ նույն զգացումը մի ակնթարթ փորձեք վերապրել ու Ձեր այդ զգացածը բազմապատկեք միլիոն անգամ, կամ միգուցե միլիարդ անգամ: Հիմա պատկերացրեցի՞ք, թե ինչ ենք զգում Հայաստան գալով:

- Էդ դեպքում, ինչո՞ւ չեք գալիս Հայաստանում մշտապես բնակվելու:

- Հայաստանն ուժեղ սփյուռքի կարիք ունի դեռ: Ներսից ու դրսից ոտքի կկանգնեցնենք մեր դրախտային երկիրն ու կվերադառնանք: Երբ առատ բերք տված խնձորենու ճյուղերը դեռ չեն հասցրել ամրանալ, կկոտրվեն, եթե հենակներն ավելի վաղ հանենք: Արևին ողջունող ամուր և ինքնուրույն ծառի ժամանակն էլ կգա մի օր:

Ես զրուցում եմ, իսկ հայացքս վազվզում է սրընթաց մեքենայի ապակուց դուրս՝ մայթերին կանգնած կամ քայլող մարդկանց դեմքերի վրայով: Ամեն մի անցորդի մեջ նրան եմ փնտրում: «Երբ հանդիպենք, տեսնես, կճանաչե՞նք իրար, վստահ եմ, որ շատ ենք փոխվել»,- մտածում եմ:

Որոշում եմ հենց մեքենայի միջից էլ զանգել Լիաննային՝ Զորոյի մասին ինչ-որ լուր ստանալու հույսով: Ավելի լավ էր՝ չզանգեի ու չիմանայի, որ մի քանի շաբաթ առաջ Զորոյի ոտքն էին հեռացրել շաքարախտից առաջացած ինչ-որ ոսկրային խնդրի պատճառով:

- Մա՛մ, ախր քեզ ի՞նչ պատահեց,- անհանգստացած ինձ է նայում աղջիկս,- վա՞տ ես զգում:

- Չէ, չգիտեմ, թե ինչ եմ զգում: Ավելի լավ է ոչ թե երեկոյան, այլ հենց հիմա գնանք իմ պատանեկության տարիների ընկերոջ տուն: Նա եղբոր պես հարազատ է ինձ ու հիմա իմ կարիքն ունի:

Նրանք համաձայնվում են: Ես մեքենայի վարորդին հայտնում եմ, որ ուղերթը փոխվել է ու տալիս եմ Զորոյի հասցեն …

Աչքերս բացում եմ՝ հիվանդանոցում եմ: Ինձ տեղեկացնում են, որ ուշակորույս վիճակում հազիվ են ինձ հասցրել հիվանդանոց: Ուշքի բերելուց հետո ներերակային սրսկում են նշանակել, նորավարտ բուժքույրն էլ ինձ շփոթելով կողքի մահճակալին պառկած հիվանդի հետ՝նրա դեղերն է ինձ ներարկել, և ինձ մի կերպ են մահից փրկել:

- Որտե՞ղ են երեխաներս,- հարցնում եմ բուժքրոջը:

- Նրանց ուղարկեցինք տուն, այցելության ժամերն արդեն ավարտվել են:

- Բայց ես տեսնում եմ, որ իմ կողքի սենյակում հիվանդի բարեկամները դեռ գնում-գալիս են,- հակաճառում եմ ես:

- Տիկի՛ն, այդ հիվանդը մահամերձ վիճակում է, ինչպես, որ դուք էիք մի քանի ժամ առաջ: Ձեզ կարողացանք փրկել, բայց նա անհույս է՝ մի քանի ժամից կլքի հարազատներին, բարեկամներին: Այդ մարդկանց ինչպե՞ս արգելենք վերջին հրաժեշտը տալ:

- Ես պետք է հենց հիմա դուրս գամ այստեղից,- խնդրում եմ բուժքրոջը,- եղբորս ոտքը կտրել են,- ու խոսքս չավարտած անսպասելի հեկեկում եմ:

- Միայն առավոտյան, երբ բժշկի թույլտվությունը կլինի,- իր սառը, ռոբոտային անտարբեր ձայնը, ասես պարանի պես վզիս փաթաթելով ու ձգելով, պատասխանում է նա:

Ի՞նչ անել, շատ անելանելի վիճակում եմ: Մտածում եմ, թե ինչպես կարող եմ համոզել այս սպիտակ խալաթավորին, որ չարգելի ինձ տուն գնալ: Փո՞ղ առաջարկել, ինչպես որոշ կինոֆիլմերում եմ տեսել նման

պարագաներում, ո՛չ, երբե՛ք, չեմ կարող, դա իմը չի: Կյանքիս կեսը կտամ, որ մեր պետության մեջ իսպառ մոռացվի կաշառք բառը, իսկ մյուս կեսն էլ դեռ պետք է ինձ, որ վայելեմ անկաշառ, ազնիվ ու բարեկարգ հասարակության մեջ ապրելը:

Կողքի սենյակում իրարանցում է սկսվում:

- Ձու՛ր բերեք, ջուր,- գոռում են տարբեր կողմերից:

Ինչ-որ մի կին հուսահատ բղավում է, դրանք բառեր չեն, ուղղակի հոգու ճիչ, մղկտոց: «Երևի մահացավ խեղճը,- մտածում եմ,- Աստված հոգին լուսավորի»:

- Հիմա տո՞ւն են տանելու,- հարցնում եմ բուժքրոջը:

- Դե հիմա դիահերձարան, մի քանի ժամից էլ՝ տուն: Սա այս տարվա առաջին դեպքն է, որ մահ գրանցեցինք այս հիվանդանոցում, սովորաբար հասցնում ենք տուն կամ ուրիշ հիվանդանոց ուղարկել:

Ռոպեներ անց հիվանդանոցի աղմուկը միանգամից վերածվում է քար լռության: Իմ մղձավանջային գիշերն ավարտվում է իր տեղը զիջելով մղձավանջային առավոտին, երբ հերթափոխի բժիշկը կտրականապես արգելում է ինձ դուրս գրվել հիվանդանոցից:

Ի՞նչ անել: Այո՛, փախուստ: Դե, ես արդեն սպիտակ խալաթավորներից փախչելու փորձ ունեմ: Աթոռի վրայից աննկատ վերցնում եմ իմ հագուստները, վարագույրի հետևում հագնվում ու ջայլամային անտարբերությամբ, առանց աջ ու ձախ նայելու արագ դուրս գալիս փողոց: Հիվանդանոցը շատ մոտ է գտնվում Զորոյի տանը: Վարորդն այս հիվանդանոցն է բերել ինձ, քանի որ հասցեն, որ իր ձեռքն եմ տվել, հենց այս ուղղության վրա է:

Ամեն քայլս ավելի ու ավելի է ինձ մոտեցնում արդեն վաղուց հարազատ դարձած շենքին, որտեղ ապրում է Զորոն:

«Իսկ եթե նա չի ցանկանում, որ ես այդպես խեղճացած ու մի ոտքով տեսնեմ իրեն,- այդ միտքը կայծակի պես հարվածում է սրտիս,- չէ՛, չպետք է գնալ, ես չեմ ուզում ավելի շատ ցավ պատճառել նրան: Իսկ գուցե ե՞ս չեմ ուզում տեսնել նրան այդպես խեղճացած»: Կտրուկ որոշում եմ ու բռնում ետ դարձի ճամփան: Օ՛, զարմանք, նրանք՝ իմ ոտքերը, դեռ շարունակում են մոտենալ շենքին: «Ո՛չ, ո՛չ, ես չեմ կարող, ես չպե՛տք է դա թույլ տամ»,- կրկնում եմ ինքս ինձ, սակայն ինչ-որ աներևույթ ուժ ինձ կարծես գցելով իր անիրական ցանցի մեջ ուղղակի քաշում է շենքի ներսից: Արդեն մթնում է: Ես մեծ ջանքերով մտովի բռնում եմ իմ սեփական

վզակոթից, ինչպես կատուն իր ձագին ու համարյա մուտքի մոտից ինձ մի կերպ դուրս բերում այդ մոգական որոգայթից: Մի ամբողջ շաբաթ ամեն առավոտ ես նորանոր կապանքներով ամրացնում եմ սրտիս շուրջ տեղադրված վանդակները, որպեսզի այն, ի հակառակ իմ որոշման, չհամագործակցի դավաճան ոտքերիս հետ ու չքայլի Զորոյի տան ուղղությամբ, բայց ինչ-որ ներքին ձայն սրտիս խորքից կրկնում է անվերջ. «Գնա՛ այնտեղ, գնա՛, մի օր հաստատ կփոշմանես»:

****

Երեխաներս դեռ Հայաստանում են, իսկ ես արդեն Ամերիկայի Միացյալ Նահանգներում օդանավից իջնելիս, սրտի կսկիծով ափսոսում եմ, որ այդպես էլ քաջություն չեմ ունեցել Զորոյի տան դուռը բախելու:

Սևամորթ վարորդը, որը բավականին երկար է ինձ սպասել օդանավակայանում՝ նախօրոք պատվիրված լինելով իմ կողմից, ողջ ճանապարհին ուրախ երաժշտություն է լսում: Ես նայում եմ պատուհանից դուրս մեքենայի արագությամբ հետ վազող ծառերին ու մտածում. «Ի՜նչ տարօրինակ է բնությունն այս երկրում: Ամառ թե ձմեռ կանաչ սաղարթներով ծառեր կտեսնես, իսկ դրանց կողքին էլ երբեմն չորացած ու մերկ

ծառախումբ: Ի՜նչ անտարբեր են նրանք մեկը մյուսի վշտին, ինչպես այս փոքրիկ մեքենայում՝ ես հազիվ եմ արցունքներս զսպում, որ Զորոյին այդպես էլ չտեսա, իսկ մեքենան քիչ է մնում պայթի այս ուրախ պարեղանակից»:

- Կարո՞ղ եք մի փոքր ձայնն իջեցնել,- խնդրում եմ վարորդին:

- Դուք շատ տխուր եք երևում, հարազա՞տ եք կորցրել:

- Ո՜չ, Աստված չանի:

- Շատ մի մտածեք ձեր խնդիրների մասին,- ասում է նա ժպտալով,- կյանքը շատ կարճ է, վայելե՛ք այն, նայե՛ք ինչ գեղեցիկ է բնությունը, հիացե՛ք, թեկուզ այս վայրի ծաղիկներով:

Ես դուրս եմ նայում: Արևածաղիկներ են՝ դեղին փոքրիկ գլխիկները հպարտորեն վեր պարզած: Շատ նման են այն ծաղիկներին, որ մի ժամանակ Զորոն իրենց բակից քաղելով նվիրել էր ինձ՝ մտածելով շատ կուրախանայի, բայց ես խիստ վիրավորվել էի հանուն ինձ ծաղիկների կյանքը կարճացնելու համար:

- Գեղեցիկ են,- համաձայնվում եմ վարորդի հետ ու մտածում. «Ի՜նչ լավ կլիներ մեր պարտեզում էլ այդ նույն ծաղիկներից աճեին՝

մի տունկը, ասենք, ձախ կողմի ցանկապատի մոտ, մյուսն էլ՝ աջ»:

Տուն հասնելուն պես շտապում եմ հեռախոսի մոտ հայտնելու մերոնց, որ ամեն ինչ կարգին է, արդեն տանն եմ: Աստվա՛ծ իմ, տասնմեկ անպատասխան զանգ է գրանցված Զորոյի տան հեռախոսից: Արդյո՞ք նա ինչ-որ մեկից կարողացել է ձեռք բերել իմ հեռախոսահամարը, թե՞ կինն է զանգողը: Արագ ետ եմ զանգում:

- Ալո՛,- ձայնս շնչակտուր է և հուզված, շատ եմ ուզում, որ Զորոն վերցնի լսափողն ու այդքան տարիներ անց վերջապես ականջիս հնչի նրա ձայնը,- ալո՛, ալո՛, ինչո՞ւ չեք խոսում:

«Ուրեմն, իրոք, նա է: Հեռախոսը վերցրել ու լռում է,- մտածում եմ,- երևի փորձում է լռության միջով իմ կարոտն առնել միայն ձայնս լսելով՝ ինչպես տարիներ առաջ»:

- Ալո՛,- կրկնում եմ ինչ-որ ծանոթ շնչառություն որսալու հույսով: Մի պահ լռությունից հետո կնոջ հեկեկոցը խեղդում է կոկորդս:

- Ի՞նչ է պատահել, խնդրում եմ, Զորոյին տվեք լսափողը, ես պետք է խոսեմ նրա հետ:

- Նա այլևս չկա:

- Ի՞նչ եք ասում, չեմ հավատում:

- Ե՛ս էլ չեմ հավատում, - մի կերպ արտաբերում է կինը,- երեք օր առաջ թաղեցինք: Ախր, նա անընդհատ Ձեր անունն էր տալիս: Այնքան եմ զանգել Ձեզ, ափսոս, որ չէիք վերցնում:

«Կարծես թե հիմա կընկնեմ, իսկ կողքս ոչ-ոք չկա, որ հիվանդանոց հասցնի,- մտածում եմ ես,- պետք է ամուր լինել, իրավունք չունեմ հիմա ուշաթափվելու»:

Իմ զգացմունքները Զորոյի կնոջից թաքցնելու նպատակով մի կերպ զսպում եմ արցունքներս ու դրանց ուղեկցելու պատրաստ հեկեկոցս:

- Ինչպե՞ս պատահեց, ախր, շատ անսպասելի էր,- հարցնում եմ մի փոքր խզված ձայնով:

Նա մի կերպ կցկտուր բառերով հասկացնում է, որ դա պատահել է կիրակի օրը, երեկոյան ութի կողմերը:

- Ոտքի վիրահատությունից հետո սիրտը չդիմացավ,- լացակումաց ավելացնում է,- մենք էլ գոհ էինք, որ հիվանդանոցը մոտ էր ու շուտ տեղ հասցնելով կարծում էինք, թե կկարողանայինք փրկել նրան:

Ես ցավակցում եմ ողջ ընտանիքին ու լսափողը վայր դնում: Տեր իմ Աստվա՛ծ, բայց այդ օրը, այդ ժամին ես էլ էի այդ հիվանդանոցում: Ուրեմն, իմ կողքի

սենյակում մահացողը Զորոն էր: Ստացվում է, որ այնքան մոտ էինք իրար, ընդամենը մի պատ էր մեզ բաժանում ու մենք կյանքին հրաժեշտ էինք տալու համարյա միաժամանակ: Փաստորեն, հաջորդ օրն էլ ոտքերս ինձ տանում էին Զորոյի տուն նրան հողին հանձնելուց առաջ վերջին հրաժեշտս տալու: Չէ՛, այսպիսի զուգադիպություն չի կարող լինել: Ա՛յ քեզ տարօրինակ իրավիճակ: Հանկարծ հիշում եմ, որ մենք ամբողջ հոգով աղոթել և խնդրել էինք Աստծուն միաժամանակ լքել այս աշխարհը: Տեսնես ես ինչո՞ւ եմ փրկվել, ի՞նչ առաքելություն ունեմ անելու: Հա՛, երևի մեր սիրո պատմությունը պիտի հանձնեմ դեռևս չգրված գրքի սպիտակ թերթերին, ինչպես Զորոյի գրած քառյակի վերջում է ասվում. «Այդ հողի միջից մի ծաղիկ ծլած Արևին կհայտնի մեր դառն կյանքն ապրած»: Ես կլինե՞մ այդ ծաղիկը:

Երկու շաբաթից ավելի տանից դուրս չեմ գալիս, նույնիսկ պարտեզ չեմ մտնում, անգամ հյուր չեմ ընդունում ու ոչ էլ հեռախոսազանգերի եմ պատասխանում: Կարևոր չի դրսում արև է, թե՞ անձրև, ես գոյություն ունե՞մ թե ոչ, կյանքը շարունակվո՞ւմ է, թե իմ ժամանակի պես կանգնած է իր տեղում:

Սենյակում օդը գնալով հեղձուցիչ է դառնում: Այդ օրն առավոտյան մի կերպ վեր եմ

կենում անկողնուցս և զգալով, որ խեղդվում եմ, դուրս եմ գալիս պարտեզ: Մի քանի րոպե անց արևն ինձ կյանքի է կոչում, խոտաբույսերի բուրմունքն ու միայն կանաչով պատված ցածրիկ խոտերը մեղմ օրորվում են քամու փաղաքշալի հպումներից: Ես բանտից նոր դուրս եկածի պես ազատ շունչ եմ քաշում և նայում շուրջս:

Հանկարծ աչքս ընկնում է ձախ ցանկապատի մոտ աճած, կես ոտնաչափ բարձրացած դեղին արևածաղկի ինչ-որ փոքրիկ թմբի: Նայում եմ աջ՝ ուղիղ հանդիպակաց ցանկապատի մոտ ճիշտ դրա կրկնօրինակն է աճում: Ա՛յ քեզ բան, բայց չէ՞որ մեքենայի մեջ ես մտքում այսպես էլ պատկերացրել եմ՝ հանդիպակաց ցանկապատերի մոտ և զարմանալին այն է, որ այդ պահին սերմերը ցանելու դեպքում հենց այսքան էլ աճած կլինեին: Ուշադիր նայում եմ շուրջս, գուցե հարևան պարտեզներում, փողոցում, ինչ-որ տեղ աճո՞ւմ են այդ արևածաղիկները, այլապես ինչպե՞ս սերմերը հայտնվեցին այստեղ, ցանկապատերի մոտ: Ո՛չ, այդ նույն ծաղիկներից, որ մի ժամանակ Զորոն նվիրել էր ինձ, ոչ մի տեղ չկա մեր շրջապատում, միայն այդ երկու հրաշքներն են արևի տակ շողշողացնում իրենց դեղին գլխիկներն ու հեռվից ինձ ողջունում: Ո՞վ է լսել իմ մտքում ասված ցանկությունը, ո՞վ այն կյանքի կոչել… Այդ պահին ես կարծես զգում եմ Զորոյի

ներկայությունը պարտեզում: Բնության մեջ ինչքան էլ առեղծվածներ լինեն, վստահ եմ՝ սրա նմանակը չկա:

****

Ահա և ուլունքիս վերջին կտորը: Շտապ վերցրեցի այդ արտացոլանքն ու նայելով ներս, որտեղ դատարանում մեղադրյալի աթոռին նստած իմ ու Զորորյի ռոմանտիկ սերն իր անմեղ աչիկներով վերջին հրաժեշտն էր տալիս ինձ, վազեցի դեպի ավտոբուսը:

...
«Իմ առաջի՛ն սեր,Դուք մեղադրվում եք իմ հոր աչքերը միտումնավոր կերպով կուրացնելու փորձ կատարելու հանցանքի մեջ»,- հիշում եմ անողոք դատավորի իմ ձայնն ու մուրճի մեկ հարվածով նրան մահապատժի արժանացնելու դատավճիռը: Պարզվում է, որ սույն մեղադրյալը հետմահու արդարացված է: Դատավճիռը հիմնված է եղել կեղծ տեղեկությունների վրա: Այս դրվագում նրա անմեղությունն ապացուցող նոր փաստեր ու խոստովանություններ են հայտնվում:

Այդ ապացույցները մայրս երկար ժամանակ զգուշորեն թաքցրել է ինձնից և հիմա, հնդկական կինոսերիալի հերթական դիտումից ազդված, անմիջապես ֆիլմի

ավարտից հետո, խիստ հուզված ու լացակումաց ձայնով խոստովանում է.

- Խնդրում եմ, երկուսով էլ ներե՛ք ինձ՝ դու էլ, Զորոն էլ: Ես, իրոք, շատ մեղավոր եմ, չպե՛տք է լսեի ընկերուհուս՝ Լաուրային: Նրա խորհրդով էր, որ այդ գուշակին պատմեցի քո երազը և նույնիսկ վճարեցի, որ հորինի հորդ աչքերը կուրացնելու սպառնալիքը՝ ձեզ բաժանելու նպատակով:

- Մա՛մ ջան, Զորոն արդեն չկա, երկուսով չենք կարող ներել քեզ, բայց ես վաղուց արդեն գլխի եմ ընկել գուշակի ստերի մասին ու, իհարկե, արդեն ներել եմ քեզ: Իմ հրաշք երեխաներին նայելով ես ուղղակի երջանիկ եմ, այսպե՛ս պիտի լիներ ու նրա՛նք պիտի ծնվեին:

Իհարկե, մայրս մեղավոր չէր: Նա փորձել էր իմ կյանքն ուղղորդել իր կարծիքով ամենաճիշտ ու երջանիկ ճանապարհով: Մինչդեռ փո՞ղը, փողը, որ տրվել էր գուշակին ստելու դիմաց, ինչպե՞ս էր Աստծուց հզոր գտնվել ու երկու անմեղ սիրող էակներին զրկել երջանիկ լինելու իրավունքից: Իսկ գուցե Աստված հենց այդպե՞ս է պատժում դժվար պահերին եկեղեցի գնալու փոխարեն գուշակներին դիմելու համար:

****

Երբ ուլունքիս բոլոր կարևոր փշրանքները խնամքով փաթաթված ու ապահով վիճակում իմ գրպանում էին, իսկ ես մի ոտքով արդեն շարժվող ավտոբուսի աստիճանին ամուր կանգնած, գլուխս բարձրացրեցի դեպի երկինք: Իմ առաջին սիրո սրտաձև մոլորակը, խրոխտ ու անսասան իր տեղում կանգնած էր ու աչքերիս առջև շողում էր ճիշտ այն նույն կապույտ երանությամբ, ինչ տասնյակ տարիներ առաջ առավոտյան զգացել էի առաջին անգամ այդ հրաշքին նայելիս:

Կրկին զգալով իմ այդ գերբնական սիրո մոլորակի ուժը, ես հասկացա՝ նա, իմ գանգրահեր պատանին, արդեն չկա ու մի գեղեցիկ, շատ սովորական օր ես Է՛լ չեմ լինի, բայց «Սրտի աչքը»՝ իմ այդ մեծ սերը տիեզերքում հավիտյան կապրի լուսավորելով բոլոր սիրահարների ճանապարհները:

Մի քանի րոպե սևեռուն հայացքով նայում էի արդեն կիսամութ երկնքին: Շարժվող շրթունքներիս նայելով մարդիկ կարծում էին, թե աղոթում էի, մինչդեռ ես կամաց շշնջում էի.

- Մնա՛ս բարով, Զո՛ր ջան, մենք դեռ կհանդիպենք մեր «Սրտի աչք» կոչվող կապույտ մոլորակում:

ԽՈՍՔ ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Անձնվեր սիրելու ունակությունը մի յուրօրինակ տաղանդ է, Աստծու կողմից ընծայված պարգև, ցավոք, բոլորին չի տրված այն:

Պայքարի՛ր, ո՛վ մարդ, քո սիրո համար,
Անշուշտ, կլինեն փշեր անհամար,
Թե պարտվես մի օր, մի հուսահատվիր,
Մինչև վերջ գնա ու մի վհատվիր:

Աշխարհն այսպես է ստեղծել տեր Աստված,
Թե չպայքարե՛ս, կվերցնի նա ետ՝
Քեզ բախտ ու շնորհ իր կողմից տրված,
Եվ կկորցնես ամեն ինչ հավետ:

Բայց սիրուց ավել ու ամենից շատ
Դու միշտ պայքարիր, որ արևի տակ
Հայրենի երկրի մեր հողն արևշատ
Չար ուժերի դեմ չընկնի ոտնատակ: